

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՁԵԿՈՒՅՑ

(ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկման համաձայն մարդու իրավունքների ոլորտում ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ)

Նախաբան

Մենք, որպես ՀՀ-ում մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները խթանելու և պաշտպանելու ուղղությամբ աշխատող հասարակական կազմակերպություն, նույնպես կարևորում ենք ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման (UPR) գործընթացի դերը, որպես մարդու իրավունքների ոլորտում ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունների կատարմանն ու ոլորտում իրավիճակի բարելավմանն ուղղված գործողություններ:

Մենք հուսով էինք, որ ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման (UPR) գործընթացի առավել արդյունավետ իրականացման համար Հայաստանի հանրապետությունը կերաշխավորեր իր քաղաքացիական հասարակության կառույցների ներգրավվածությունը: Ավաղ, այն տեղի չունեցավ, նույնիսկ այդ հաշվետվությունը մայրենի լեզվով չի թարգմանվել և տեղադրված չէ ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում: Այսինքն հայ հասարակությունը, այդ թվում զանգվածային լրատվության միջոցներն ու հասարակական միավորումներս պատշաճ տեղեկացված չենք հիշատակված հաշվետվության մասին:

Միայն մեկ անգամ՝ 2010թ. հունվարին ՀՀ արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության կողմից կազմակերպվել է հանդիպում, որին մասնակցել են սակավաթիվ /4-5/ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Չնայած, որոշ հասարակական կազմակերպություններ, որոնք չեն մասնակցել, հասցրել են ներկայացնել իրենց այլընտրանքային զեկույցը՝ մասնավորապես 2008թ. մարտի 1-ին տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ:

2010թ. մայիսին ՀՀ կողմից իր ազգային համապատասխան զեկույցը ՄԱԿ-ին ներկայացնելուց և որոշ առաջարկություններ ստանալուց հետո ՀՀ վարչապետի 28.06.2011թ. <Մարդու իրավունքների ոլորտում ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու և ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկման ընթացակարգի համաձայն ՀՀ ազգային միջանկյալ զեկույցը նախապատրաստելու նպատակով միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին> թիվ 598-Ա որոշմամբ ստեղծվել է անհատական կազմ, որի կազմում ընդգրկվել են միայն պետական կառույցների ներկայացուցիչները:

Ինչպես նշված է ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից տարածված մամլո հաղորդագրության մեջ, հասարակական կազմակերպությունները կարող են մասնակցել նիստերին հրավիրյալի կարգավիճակով: Այստեղից եզրակացնու ենք, որ ՀՀ կառավարությունը բաց և թափանցիկ, հրապարակայնորեն չի համագործակցում շահագրգիռ հասարակայնության հետ, իր կողմից միջազգային կառույցներին ներկայացվող ազգային հաշվետվությունների ներկայացման ամենավաղ փուլում չի ապահովվում քաղաքացիական հասարակության կառույցների ներգրավվածությունն ու հրապարակայնությունը: Ինչը թույլ է տալիս ասելու, որ մեր հանրապետությունում դեռևս չկա ՀՀ իշխանությունների կողմից քաղաքացիական հասարակության կառույցներին հետ փոխհամագործակցելու և նրանց կարծիքը հաշվի առնելու մշակույթն ու կամքը:

1. Արդարադատության կիրառում, մարդու իրավունքներ, կալանքի կամ ազատագրկման ենթարկված անձանց պաշտպանություն

1.1. ԻՐԱՎԱՊԱՀ ՊԱՇՏՈՆՅԱՆՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 16.12.1966թ.2200 Ա /XXI/ բանաձևով ընդունված <Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին> միջազգային դաշնագրի 10-րդ հոդ. 1-ին մասի համաձայն <Ազատագրկված բոլոր անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և մարդկային անհատին ներհատուկ արժանապատվության հարգման իրավունք>:

Պաշտոնատար անձանց վարքագծի կանոնագրքեր մշակելու և ընդունելու պարտավորությունը Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է <Կոռուպցիայի դեմ> ՄԱԿ-ի կոնվենցիայով /այսուհետև Կոնվենցիա/, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 23.10.2006թ. թիվ Ն-303-3 որոշմամբ: Սույն Կոնվենցիան պաշտոնապես ուժի մեջ է մտել 07.04.2007թ., որի 8-րդ հոդվածով նախատեսված է պաշտոնատար անձանց վարքագծի կանոնագրքերի ընդունման պարտավորությունը, որի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված են.

<2. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձգտի իր ենթակառուցվածքային և իրավական համակարգերի շրջանակներում կիրառել վարքագծի կանոնագրքեր և ստանդարտներ պետական գործառույթների ճշգրիտ, բարեխիղճ և պատշաճ իրականացման համար:

3. Սույն հոդվածի դրույթների իրականացման նպատակներով յուրաքանչյուր Մասնակից պետություն, համապատասխան դեպքերում և իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է նկատի ունենա տարածաշրջանային, միջտարածաշրջանային և բազմակողմ կազմակերպությունների համապատասխան նախաձեռնությունները, օրինակ՝ Գլխավոր վեհաժողովի 1996 թ. դեկտեմբերի 12-ի 51/59 բանաձևին կից հավելվածում պարունակվող՝ <Պաշտոնատար անձանց վարքագծի միջազգային կանոնագիրք>:

Սույն հոդվածի 2-րդ կետի սահմանումը վերաբերում է բոլոր պետական պաշտոններ զբաղեցնող անձանց, այդ թվում նաև իրավակարգը պաշտպանող: Պետական այլ պաշտոնների շարքում՝ իրավապահ պաշտոնյաների վարքագիծը կարգավորող իրավական ակտեր ընդունելու պարտավորությունը կարող է համարվել առավել հրատապ ու կարևոր, ելնելով նրանց լիազորությունների բնույթից: Իրավապահ պաշտոնյաների վարքագիծը կանոնակարգելու պարտավորությունը բխում է նաև ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից Հայաստանին տրված հանձնարարականներից:

Վերը նշված հանձնարարականների կատարման վերաբերյալ վերլուծություն կատարելու, ընդհանուր հասկացությունները ՄԱԿ-ի գործունեությանը համահունչ մեկնաբանելու, սկզբունքները ճիշտ կիրառելու համար նպատակահարմար է օգտվել ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 17.12.1979թ. 34/169 բանաձևով ընդունված <Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց վարվելակերպի կանոնագիրք> և ՄԱԿ-ի տնտեսական ու սոցիալական խորհրդի 24.05.1989թ. բանաձևով հաստատված <Ղեկավար սկզբունքներ իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց վարվելակերպի կանոնագրքի արդյունավետ իրականացման համար> միջազգային պայմանագրերի դրույթներից:

Նշված միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետությունը չի վավերացրել և ընդհանուր առմամբ չունի պարտավորություն կատարելու այնտեղ ամրագրված պահանջները, ինչը ՀՀ օրենսդրական դաշտը կատարելագործելու տեսակետից կարծում ենք լուրջ բացթողում է: Սակայն այս երկու պայմանագրերում նշված դրույթները կիրառելու պարտավորությունը բխում է <Կոռուպցիայի դեմ> ՄԱԿ-ի կոնվենցիայի 8-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջից:

Մույն կետի պահանջի իմաստով ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 17.12.1979թ. 34/169 բանաձևով ընդունված <Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց վարվելակերպի կանոնագիրքը> և ՄԱԿ-ի տնտեսական ու սոցիալական խորհրդի 24.05.1989թ. բանաձևով հաստատված <Ղեկավար սկզբունքներ իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց վարվելակերպի կանոնագրքի արդյունավետ իրականացման համար> միջազգային պայմանագրերը կարող են համարվել որպես համապատասխան նախաձեռնություն, ինչն էլ հիմք կտա ՀՀ պետական մարմիններին նկատի ունենալ դրանք:

Համաձայն ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված <Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց վարվելակերպի կանոնագրքի>, <Իրավակարգը պաշտպանող անձինք> տերմինը ներառում է այն բոլոր նշանակված կամ ընտրովի պաշտոնատար անձանց, որոնք կապված լինելով օրենքի կիրառման հետ, ունեն ոստիկանական, հատկապես օրինախախտներին ձերբակալելու, վարչական պատասխանատվության ենթարկելու լիազորություններ:

Ելնելով այս մեկնաբանությունից, որպես իրավակարգը պաշտպանող անձինք հանդես են գալիս ՀՀ ոստիկանությունը, նրա կազմում գործող ոստիկանության պարեկապահակետային ծառայությունը, ՀՀ հարկային և մաքսային, ՀՀ ազգային անվտանգության, ՀՀ ռազմական ոստիկանության ծառայողները, ինչպես նաև ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի համաձայն վարչական պատասխանատվություն իրականացնող այլ պետական մարմիններ, օրինակ՝ ՀՀ սահմանապահ զորքեր, պահպանվող օբյեկտի գտնվելու վայրի ռազմականացված պահպանության ավագ և զինվորական ավտոմոբիլային տեսչության պաշտոնատար անձինք և այլն:

ՀՀ ներպետական օրենսդրության մեջ կան իրավական նորմեր, որոնք որոշ չափով կանոնակարգում են վերը նշված ծառայությունների և անձանց մի մասի վարքագիծն իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս: Այդպիսի նորմեր կան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, <Ոստիկանության մասին> ՀՀ օրենքում և այլ իրավական ակտերում: Հայաստանի Հանրապետությունում իրավակարգը պաշտպանող մարմիններն ու դրանց վարքագիծը կանոնակարգող, իրենցից առանձին իրավական ակտ ներկայացնող նորմատիվ ակտերը թվարկված են ներքոհիշյալ աղյուսակում:

Աղյուսակ

1.	Իրավակարգը պաշտպանող մարմնի անվանումը	Վարքագիծը կանոնակարգող համապատասխան իրավական ակտի անվանումը
2.	ՀՀ ոստիկանություն	<ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը

		հաստատելու մասին> ՀՀ օրենք Ընդ. ՀՀ ԱԺ կողմից 11.04.2005թ.
3.	ՀՀ ոստիկանության պարեկապահակետային ծառայություն	ՀՀ Կառավարության 11.01.2007թ. <ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պարեկապահակետային ծառայության կանոնադիրքը հաստատելու մասին> N 151-Ն որոշում
4.	ՀՀ հարկային ծառայություն	ՀՀ կառավարության 10.10.2002թ. <Հարկային ծառայողի վարքագծի կանոնները հաստատելու մասին> N 1624-Ն որոշում
5.	ՀՀ մաքսային ծառայություն	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 07.11.2008թ. <ՀՀ մաքսային ծառայողի էթիկայի կանոնները հաստատելու մասին> թիվ 160-Ա հրաման
6.	ՀՀ ազգային անվտանգության ծառայության մարմիններ	Դեռևս չի ընդունվել
7.	ՀՀ սահմանապահ զորքերը	<ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնադիրքը հաստատելու մասին> ՀՀ օրենք Ընդ. է ՀՀ ԱԺ-ի կողմից 03.12.1996թ. ՀՀ կառավարության 12.08.1996թ. <ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրությունը հաստատելու մասին> N 247-Ն որոշում
8.	Պահպանվող օբյեկտի գտնվելու վայրի ռազմականացված պահպանության ավագ պաշտոնատար անձը	<ՀՀ զինված ուժերի կայազորային ու պահակային ծառայությունների կանոնադիրքը հաստատելու մասին> ՀՀ օրենք Ընդ. է ՀՀ ԱԺ կողմից 03.12.1996թ. ՀՀ կառավարության 12.08.1996թ. <ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրությունը հաստատելու մասին> N 247-Ն որոշում
9.	ՀՀ ռազմական	<ՀՀ զինված ուժերի ներքին

	<p>նստիկանություն (համարվում է զինվորական ծառայություն)</p>	<p>ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին> ՀՀ օրենք Ընդ. է ՀՀ ԱԺ կողմից 03.12.1996թ.</p> <p>ՀՀ կառավարության 12.08.1996թ. <ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրությունը հաստատելու մասին> N 247-Ն որոշում</p>
10.	<p>Զինվորական ավտոմոբիլային տեսչության պաշտոնատար անձինք (իրականացվում է ՀՀ ռազմական նստիկանության կողմից)</p>	<p><ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին> ՀՀ օրենք Ընդ. է ՀՀ ԱԺ կողմից 03.12.1996թ.</p> <p>ՀՀ կառավարության 12.08.1996թ. <ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրությունը հաստատելու մասին> N 247-Ն որոշում</p>

ՀՀ իրավակարգը պաշտպանող մարմինների շարքում ՀՀ ազգային անվտանգության մարմինները մինչև օրս չունեն իրենց վարքագիծը կարգավորող առանձին իրավական ակտ, իսկ իրավապահապ մարմիններին առնչվող իրավական ակտերն ունեն խիստ լրացման անհրաժեշտություն: Որպես կանոնադրության կամ կանոնագրքի նմուշային տարբերակ կարող են օգտագործվել ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 12.12.1996թ. դեկտեմբերի 12-ի 51/59 բանաձևին կից հավելվածում պարունակվող՝ «Պաշտոնատար անձանց վարքագծի միջազգային կանոնագիրքը», «Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց վարվելակերպի կանոնագրքի», ինչպես նաև ՄԱԿ-ի տնտեսական ու սոցիալական խորհրդի 24.05.1989թ. բանաձևով հաստատված «Ղեկավար սկզբունքներ իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց վարվելակերպի կանոնագրքի արդյունավետ իրականացման համար» միջազգային պայմանագրերի դրույթները: Հորդորում ենք ՀՀ իշխանություններին վավերացնել վերը նշված միջազգային պայմանագրերը և ՀՀ օրենսդրության պահանջները համապատասխանեցնել դրանց: Չնայած, մեկ այլ խնդիր է, որ վերը թվարկված ՀՀ իրավապահ մարմինները, որոնք ունեն վարքագծի կանոններ, շատ հաճախ նրանց կողմից դրանց պահանջները խախտվում են կամ չեն կիրառվում: Այդ մասին են վկայում ստորև ներկայացված զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները:

Մինևույն ժամանակ, հարկ ենք համարում նկատել, որ ՀՀ օրենսդրությամբ «Իրավապահ մարմիններ» սահմանումը բացակայում է: Կարծում ենք, տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ հստակեցնել և սահմանել «Իրավապահ մարմիններ» հասկացությունը, նկատի ունենալով, որ ՀՀ օրենքների իմաստով կիրառվող «Իրավապահ մարմիններ» հասկացությունը, որպես միասնական հասկացություն, ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ: Բացի այդ, համաձայն

ճյուղային օրենսդրության և միջազգային պայմանագրերի իմաստով, այն կիրառվում է մաքսային և հարկային մարմինների նկատմամբ ևս:

Ցածր մակարդակում են գտնվում իրավակարգը պաշտպանող գրեթե բոլոր կառույցները: Քաղաքացիների հետ հարաբերություններում պաշտոնատար անձինք իրենց պաշտոնական լիազորությունները կատարելիս թույլ են տալիս ոչ միայն ՀՀ օրենսդրության պահանջների, այլ նաև վարքագծի կանոնների կոպիտ խախտումներ, վատ վերաբերմունք, արհամարհանք շարքային քաղաքացու նկատմամբ, անհարկի ու անտեղի հետաձգում են իրենց պարտականությունների կատարումը, հաճախակի դրսևորվում են պաշտոնատար անձին անվայելուչ պահվածքով:

ՀՀ-ում իրավակարգը պաշտպանող անձանց վարքագիծը բավարար չափով կարգավորված չէ ՀՀ ներպետական իրավական ակտերով, իսկ իրավակիրառ պրակտիկայում բավարար չափով վերահսկողություն չի իրականացվում: Մարդու իրավունքները հարգված և պաշտպանվախ չեն ՀՀ իրավակարգը պաշտպանող անձանց կողմից: Անհրաժեշտ է անհապաղ վավերացնել ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 17.12.1979թ. 34/169 բանաձևով ընդունված <Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց վարվելակերպի կանոնագիրքը> և ՄԱԿ-ի տնտեսական ու սոցիալական խորհրդի 24.05.1989թ. բանաձևով հաստատված <Ղեկավար սկզբունքներ իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց վարվելակերպի կանոնագրքի արդյունավետ իրականացման համար> միջազգային պայմանագրերը և ՀՀ ներպետական օրենսդրությունը համապատասխանեցնել այդ միջազգային պայմանագրերի դրույթներին: Այնուհետև, անհրաժեշտ է մշակել իրավակարգը պաշտպանող անձանց վարքագծի կանոնները խախտելու դեպքում պատասխանատվության համակարգ և առանց բացառության պատժել այն պաշտոնատար անձանց ովքեր կխախտեն իրենց վարքագիծը կարգավորող իրավական ակտերի պահանջները:

Չնայած, իրավական ակտեր ունենալով և ցանկացած իրավահարաբերություն դե յուրե կարգավորելով, բավարար չէ դե ֆակտո բացառել մարդու իրավունքների խախտումներն իրավապահ մարմինների կողմից, քանզի անհրաժեշտ է պետության իշխանությունների քաղաքական կամքն այդ պահանջների կատարման ոլորտում:

Իրավապահ մարմինների կողմից վարքագծի կանոնների խախման վերաբերյալ մի քանի օրինակ՝ վերցված ՁԼՄ-ներից.

1) www.hetq.am 01.08.2011թ.

Բողոքում են Արմավիրի ոստիկանների գործադրած բռնությունից

Ոստիկանության Արմավիրի մարզի աշխատակիցները օպերատիվ տվյալներ իրացնելիս 2010 թ. փետրվարի 4-ին թմրավաճառի տան մոտ հետեւել են տաքսի ավտոմեքենայի 2 ուղևորներին: Նրանցից մեկը թմրանյութ է ձեռք բերել, ու մեքենան շարժվել է: Քիչ անց, կանգնեցնելով տաքսին, ոստիկանները մեքենայում հայտնաբերել են առանց պահունակի 2 զազային ատրճանակ, որոնցից մեկը վերափոխված է եղել մարտականի: <Երեքին էլ՝ վարորդին եւ ուղևորներին, անմիջապես տարել են ոստիկանության Արմավիրի բաժին ու սկսել ծեծել: Արդեն հաջորդ օրը երեկոյան խոստովանել են, որ դրանից 2 ամիս առաջ ավազակային հարձակում են կատարել: Բայց ամեն ինչ ուղևորներից մեկը՝ Մարգարետունի Ավուշյանը, վերցրել է իր վրա>,- պատմում է Ավուշյանի փաստաբան Տիգրան Հայրապետյանը: Արդեն 4-րդ օրը 43-ամյա Մարգարետունին խոստովանել է մեկ այլ հանցագործության՝ ավազակային հարձակման նախապատրաստման մասին, նույնիսկ մատնանշել է զոհին, որը, ինչպես փաստաբան

Հայրապետյանն է ասում, «կանաչի վաճառող է, եւ անհեթեթ է մտածել, որ այդ մարդուց կարելի է ավազակային հարձակմամբ գումար հափշտակել»: Առաջին օրերին իբրեւ պաշտպան գործում ներգրավված փաստաբանները (նրանցից մեկը՝ հանրային պաշտպան), միմյանց փոխարինելով, ծառայություններ են մատուցել թե՛ Մարգալետունի Ավուշյանին, թե՛ նրա հետ ձերբակալված մյուս անձանց: Մինչդեռ վերջիններիս շահերն ակնհայտորեն բախվել են: «Քանի որ Մարգալետունին ամեն ինչ վերցրել է իր վրա, իսկ դա այդպես չէ, ցուցմունքներում եղել են էական հակասություններ: Ոստիկաններն էլ այդ հակասություններն առերեսումների միջոցով «շտկել» են՝ ի վնաս Մարգալետունու», - ասում է փաստաբան Տիգրան Հայրապետյանը: Նա ձերբակալումից 4 օր անց Մարգալետի հարազատների խնդրանքով փորձել է պաշտպանել վերջինիս շահերը: Սակայն Մարգալետունին հայտարարել է, թե՛ գոհ է իր փաստաբանից՝ հանրային պաշտպան Յուլյա Մարգարյանից, եւ իր հարազատների ընտրած պաշտպանից հրաժարվել է: «Երբ Մարգալետունուն տեսա, աչքի տակը կապտած էր, չէր կարողանում խոսել: Իսկ քննիչ Արզամ Մարգարյանն այնքան էր իր վրա վստահ, որ նույնիսկ կալանքի սանկցիայի կիրառման ժամանակ ինձ հրավիրեց դատարան, եւ Մարգալետունին դատավորի մոտ էլ ինձնից հրաժարվեց: Բայց ես, միեւնույն է, հայտարարեցի, որ նա ստիպված է այդպես անում, քանի որ խոշտանգման հետքերն ակնհայտ էին», - պատմում է փաստաբան Հայրապետյանը: Հետագայում Մարգալետունի Ավուշյանը վերհիշել է այդ օրերին կատարվածը. «Քննիչն ասում էր՝ դու ձեռք չունես, եթե պետք եղավ, կգանք մեկուսարանում էլ քեզ կջարդենք, մենք խնդիր չունենք»: Խոշտանգումների եւ անմարդկային վերաբերմունքի կապակցությամբ հանցագործության մասին հաղորդում է տվել ոչ միայն Մարգալետունին, այլեւ ավելի ուշ, ի վերջո, նրա պաշտպանությունը ստանձնած Տիգրան Հայրապետյանը: «Մեկ ժամ ընդմիջում էին, հետո նորից սկսում անխնա ծեծել: Այն տպավորությունն էր, որ ես արդեն մահացել եմ եւ չեմ ձգի անգամ մի քանի ժամ», - գրել է Մարգալետունի Ավուշյանը եւ մանրամասնել, որ Արմավիր քաղաքի ոստիկանությունում 5-6 հոգի իրեն բռունցքներով եւ «դուրիսկաներով» դաժանաբար ծեծել են, զցել են գետնին ու ոտքերով հարվածել՝ հիմնականում գլխին, անգամ կիրառել են «էլեկտրաշոկ»: Նա պատմել է, որ ընդհանուր տեւողությամբ իրեն օրական ծեծել են 14-16 ժամ, առաջին 3 օրերին հաց չեն տվել, նույնիսկ թույլ չեն տվել, որ ուտի ուրիշից վերցրած հացը, իսկ երբ խնդրել է հաց տալ, ծեծն ուժգնացել ու ավելի դաժան է դարձել: Փաստաբան Տիգրան Հայրապետյանն էլ ասում է, որ այս ամենն ուղեկցվել է «լկտի հայիտյանքներով», եւ Մարգալետունու արժանապատվությունը ոստիկաններն այն աստիճանի են նվաստացրել, որ վերջինս ինքնասպանության փորձ է արել: «Ես անձամբ դատախազ Արամ Դոլինյանին ասացի՝ Մարգալետունուն ջարդել էք, որ ցուցմունք տա: Ասում է՝ բա ի՞նչ պիտի անեինք, մի 2 հատ վզին չտայի՞նք: Չեն էլ թաքցնում, այսինքն՝ իրենց մոտ դրված է ծեծել-ջարդելով ցուցմունք կորզելը: Իսկ խոշտանգված մարդը կարող է ամեն ինչի տակ ստորագրել», - ասում է փաստաբան Հայրապետյանը: Մարգալետունու կալանավորել են ձերբակալելուց 4 օր անց, մինչդեռ ձերբակալման ժամկետը 72 ժամ է: Ավելին, կալանավորվելուց հետո նրան 2 օր ուշ են տեղափոխել մեկուսարան՝ շարունակելով պահել ոստիկանությունում: Ըստ փաստաբանի՝ ուղղակի սպասել են, որպեսզի խոշտանգման ակնհայտ հետքերն անհետանան: Սակայն ոստիկանները բացատրություն են տվել, թե՛ Մարգալետունուն ձերբակալելուց հետո բաց են թողել, հետո հաջորդ օրը նորից ձերբակալել, հետեւաբար 72 ժամը պետք է հաշվել երկրորդ ձերբակալությունից սկսած: Թե՛ ինչու՞ էին Ավուշյանին ազատ արձակում եւ 1 օր անց կրկին նույն պատճառով՝ ավտոմեքենայում հայտնաբերված գազային ատրճանակների համար նորից ձերբակալում, անհասկանալի է: Իսկ

փաստաբանն այս ամենը բնորոշում է մեկ բառով՝ հեքիաթ: Ըստ էության, հենց այդ <հեքիաթն> էլ հիմք ընդունելով՝ Հատուկ քննչական ծառայությունը որոշել է քրեական գործի հարուցումը մերժել: Փաստաբան Տիգրան Հայրապետյանն այս որոշումը բողոքարկել է առաջին աստիճանի դատարան, բայց որեւէ բան չի փոխվել: Հիմա գործի այս դրվագը՝ խոշտանգումների պատճառով քրեական գործ չհարուցելու ՀՔԾ-ի որոշումը, փաստաբանը բողոքարկում է վերաքննիչ դատարան: Այս գործը լի է ուշագրավ դրվագներով, որոնց մասին առայժմ չենք բարձրաձայնում: Մարզպետունու հարազատ եղբայրն ազատամարտիկ Մանվել Ավուշյանն է, որին մեր իշխանության վերնախավի շատ անդամներ անձամբ ճանաչում են: Արդեն կալանավորվելուց հետո եղբոր հետ կատարվողի առնչությամբ ազատամարտիկը նամակ է գրել անձամբ Սերժ Սարգսյանին: Իսկ նրա փաստաբանը դիմել է ԱԱԾ՝ խնդրելով աջակցություն: Սակայն, միեւնույն է, խնդիրը կարգավորվել է հանցավոր աշխարհի մակարդակով՝ գողականների միջամտությամբ:

2) www.azatutyun.am 15.08.2011թ.

Փաստաբանների պալատը <ապօրինի> է համարում ոստիկանության գործողությունները

Հայաստանի փաստաբանների պալատի խորհուրդն <ապօրինի> է որակում ոստիկանության Երեւանի Կենտրոնի բաժնի աշխատակիցների գործողությունները Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) երիտասարդ ակտիվիստների փաստաբանների նկատմամբ: Այս մասին խորհուրդը որոշում է կայացրել օգոստոսի 12-ի արտահերթ նիստում: Որոշումը վերաբերում է օգոստոսի 9-ին Երեւանի Կարապի լճի մերձակայքում ոստիկանների հետ միջադեպից հետո ՀԱԿ յոթ երիտասարդ ակտիվիստներին ոստիկանության Կենտրոնի բաժնի բերման ենթարկելու և ձերբակալելու ընթացքում տեղի ունեցածին: Երիտասարդներին ոստիկանության Կենտրոնի բաժնի բերման ենթարկելուց հետո փաստաբաններ Վահե Հովսեփյանի ու Ստեփան Ոսկանյանի նկատմամբ կիրառվել են անօրինական գործողություններ՝ խոչընդոտվել են փաստաբանների լիազորությունները, նրանց նկատմամբ բռնություն կիրառելուց զատ՝ ոստիկանության աշխատակիցները փաստաբաններին որոշ ժամանակով զրկել են ազատությունից: Փաստաբան Ստեփան Ոսկանյանն <Ազատություն> ռադիոկայանին պատմել էր այն մասին, որ ոստիկանները ոչ միայն արգելում էին իրենց աշխատել, այլևս որոշ ժամանակով փակել էին սենյակում ու անգամ արգելում էին դուրս գալ ոստիկանության շենքից: Ոստիկանները Ոսկանյանից խլել են նրա բջջային հեռախոսը: <Մեզ չթողեցին դուրս գալ, ասացին՝ ինչ-որ տեղ գործողություններ են կատարում, անձ են տանում-բերում, բայց տեսանք, որ տղաներից մեկին տարան, երեւի դուրս տարան ու դրանից հետո մենք ոչ մի բան չենք տեսել, որովհետեւ սենյակում փակված ենք եղել: Հետո փորձել ենք դուրս գալ՝ ասելով, որ խմելու ջուր ենք ուզում, մեզ ասացին, որ ոչ մի բան չի թույլատրվում տալ, վերցնել: Մենք ասացինք՝ այդ դեպքում ուզում ենք դուրս գալ, մեզ ասացին, որ նույնիսկ չենք թողնում շենքից դուրս գալ: Ու այդպես սպասել ենք... հետո պարզեցինք, որ տղաներին փաստորեն հանել ենք շենքից ու մենք արդեն դուրս եկանք>, - պատմել էր Ոսկանյանը: Փաստաբան Վահե Հովսեփյանն էլ նշում է, որ ոստիկաններն անում էին հնարավորը, որպեսզի երիտասարդները չստանան փաստաբանական օգնություն: Հովսեփյանն ասում է, թե իրենց քաջքշելուց հետո անգամ շենքի էլեկտրականությունը մի պահ անջատեցին: <Երբ արդեն միացրեցին (դա մի քանի վայրկյան տեւեց), արդեն տղաներին դուրս էին բերում>, - ասում էր Հովսեփյանը: Մինչ փաստաբանները պնդում են, թե ինչպես իրենք, այնպես էլ

իրենց պաշտպանյալները ոստիկանությունում ենթարկվել են ճնշումների, ոստիկանապետ Ալիկ Սարգսյանն անցած շաբաթ լրագրողների հետ հանդիպմանը, հայտարարել էր, թե փաստաբաններն ազատ էլումուտք են ունեցել շենք բերման ենթարկելու հենց առաջին պահից: <Փաստաբանները ազատ էլումուտ են ունեցել: Փաստաբանը դատավարության այն պահից է հայտնվում, երբ քննիչը սկսում է ցուցմունք վերցնել եւ քրեական գործ է հարուցվում: Երբ անձին բերման են ենթարկում բաժին, երբ ընդամենը պետք է պարզեն անձի ինքնությունը, փաստաբանի ներկայությունը այդքան պարտադիր չէ՝ ասեմ ձեզ: Բայց այս դեպքում նույնիսկ հրահանգ եմ տվել, որ ցանկացած փաստաբան մոտեցավ շենքին, ներս թողեք>, - ասել էր ոստիկանապետը: Փաստաբանների պալատի խորհրդի անդամ Մելանյա Առուստամյանը <Ազատություն> ռադիոկայանի հետ զրույցում նշեց, որ կատարվածի պատճառները իրենք դեռեւս քաղաքականության մեջ չեն փնտրում, գնահատականներ կտան ավելի ուշ: Առուստամյանի խոսքով՝ փաստաբանները հաճախ են ենթարկվում անհարգալից, անօրինական վերաբերմունքի ինչպես ոստիկանական բաժանմունքներում, այնպես էլ դատարաններում: Հիմնական պատճառը, նրա կարծիքով, ոստիկանության աշխատակիցների իրավագիտակցության պակասն է: <Իմ պրակտիկայում ես հանդիպել եմ դեպքերի, երբ դրանք քաղաքական չեն եղել, սակայն ինձ եւս արգելվել է մուտք գործել [ոստիկանական բաժանմունք] բերման ենթարկված անձի հետ տեսակցելու համար>, - ասաց Առուստամյանը: Մինչդեռ իրավապաշտպան Միքայել Դանիելյանը, ով ՀԱԿ ակտիվիստներին բերման ենթարկելու ժամանակ եւս շտապել էր ոստիկանական բաժանմունք, <Ազատություն> ռադիոկայանի հետ զրույցում բացառեց իրավագիտակցության հետ կապած խնդիրները: Ըստ նրա՝ իրական պատճառները քաղաքական են: Դանիելյանը եւս վկայեց ինչպես երիտասարդների, այնպես էլ փաստաբանների նկատմամբ ոստիկանների ցուցաբերած անօրինական գործողությունների մասին: <Ինչքան էլ անգրագետ լինեն, նրանք լավ գիտեն՝ ինչ է փաստաբանը, ինչ է իրենից ներկայացնում: Այս դեպքի պարագայում իրոք քաղաքական դրդապատճառ կար, եւ քաղաքական նկատառումներով փորձում էին ամեն ինչ անել, որ խոչընդոտեին նորմալ պաշտպանության կազմակերպմանը>, - ասաց Դանիելյանը: Փաստաբանների պալատը կատարված վերաբերյալ նաեւ հաղորդում է ներկայացել գլխավոր դատախազություն:

3) www.hetq.am 19.08.2011թ.

Բազրատաշենի անցակետում նորից հերթեր են

Իսկապես անհասկանալի է, թե պաշտոնյաները, ծառայողները ինչո՞ւ չեն սիրում իրենց քաղաքացիներին եւ ամեն ինչ անում նրանց կյանքը բարդացնելու համար: Երեկ առավոտյան՝ ժամը 11-ին, հայ-վրացական սահմանի Բազրատաշենի անցակետում նորից հերթեր էին: Վրացական սահմանի մաքսակետն անցնելու համար մեզնից պահանջվեց հինգ րոպե, իսկ Հայաստանի անցակետում՝ 1 ժամ 15 րոպե: Հայ սահմանապահին հենց այդպես էլ հարցնում եմ՝ ինչո՞ւ էք մեր քաղաքացիներին տանջում: Նա ասաց. <Դե վրացիների մոտ էլ են հերթեր, ինչո՞ւ այդ մասին չես ասում>: Ասում եմ, որ լրագրող եմ եւ տալիս մյուս հարցը, որը վերաբերում է կամրջի վրա կանգնած հսկա բեռնատարներին: Բոլորը բարձված են, յուրաքանչյուրին՝ 40 տոննայից ավելի բեռ: Մի պահ կամրջի վրա միայն այդ մեքենաներն էին: Սահմանապահին հարցնում եմ. <Գիտե՞ք, որ կամուրջը կարող է փլվել, չի թույլատրվում բեռնված մեքենաների կանգառը կամրջի վրա>: Նա ասաց, որ վրացիների հետ պայմանավորվել են, որ հերթով բաց թողնեն, նրանք բոլորին են բաց թողնում: Ես ասում եմ՝ վրացիները հերթով են բաց թողել, մերոնք են կուտակել նրանց:

Մահմանապահն ասաց. <Լավ, ես ի՞նչ անեմ, այստեղ նախագահի վերահսկողական ծառայությունից աշխատող կա, եկեք նրան ասեք>: Գնում եմ: Վերահսկողականի աշխատակիցը կանգնած է հենց անցակետի մեջտեղում, փորձում եմ հասկանալ, թե ինչու է նա կանգնել այնտեղ, բայց չի ստացվում: Նույն հարցերը տալիս եմ նրան՝ ինչո՞ւ եք մեր քաղաքացիներին այս օրը գցում: Նա զարմացած ասում է՝ բայց Վրաստանում էլ են հերթեր լինում: Ես ասում եմ՝ Վրաստանն ինձ չի հետաքրքրում, ես իմ երկրի մասին եմ ուզում իմանալ: Հետո ասաց, որ Վրաստանը մի քանի անցուղի ունի անցակետում, ես պատասխանում եմ, որ մենք բոլորս մի կետից ենք անցել եւ եկել ենք մեր երկրում <կուտակվել>, ի՞նչն է պատճառը: Այս ամսվա ընթացքում երկրորդ անգամ էի Վրաստան գնում, նույն իրավիճակն էր նաեւ անցյալ անգամ: Խնդիրն այն է, որ անցնողների թիվը բնավ էլ մեծ չէր, պարզապես անհասկանալի է, թե ինչու են մեր անցակետում նստած աշխատակիցներն իրենց գործողություններն այդքան դանդաղ, միմյանց հետ զրուցելով, պահի տակ ինչ-որ տեղ <թոնելով> անում: Ի՞նչն է պատճառը. սրա համար էլ տնտեսական ճգնաժամն է մեղավոր: Իհարկե ոչ. ապաշնորհ կառավարումն է պատճառը: Երկիրը չի կառավարվում, երկիրը բարձիթողի վիճակում է, եթե տարիներ շարունակ չեն կարողանում մի անցակետի աշխատանք կարգավորել, նշանակում է՝ ոչ մի բան էլ չեն կարող կազավորել: Այդ 1 ժամ 15 րոպեն բավարար էր, որպեսզի երկիր մտնող ՀՀ քաղաքացիները <քայքայվեն>:

4) www.hraparak.am 22 հուլիսի, 2011թ.

Որոշել են լիցքաթափվել

Մամուլում գրվեց, որ Շենգավիթի քննչականի մի խումբ քննիչներ օրերս որոշել են մի քիչ լիցքաթափվել եւ խրախճանք են կազմակերպել հենց բաժնում՝ բերման ենթարկված մարմնավաճառների հետ: Սակայն, մեր տեղեկություններով, քեֆը տեղի է ունեցել համայնքի օբյեկտներից մեկում: Խրախճանքն այնքան բուռն է եղել, որ բանը հասել է բարձրաձայն հայհոյանքների: Կատարվածի մասին տեղեկացել է Շենգավիթի ոստիկանապետը եւ այդ մասին զեկուցագիր է գրել Ալիկ Սարգսյանին: Ոստիկանության լրատվականից երեկ տեղեկացանք, որ Շենգավիթի քննչականի աշխատակիցներից մեկի նկատմամբ, ում անունը չի հրապարակվում, ծառայողական քննություն է սկսվել: Թե ինչու այդ մեկի, երբ մասնակիցները շատ են՝ դեռեւս պարզ չէ: Հավանաբար նա ամենաբարձրն է հայհոյել կամ ամենաանպաշտպանվածն է եղել:

Հ. Գ. Նմանատիպ դեպքերը բազմաթիվ են իրավունքի բոլոր ոլորտներում, որոնք լուսաբանվում են մամուլի կողմից:

Լրացուցիչ

Վերոշարադրյալից բացի, անհրաժեշտ ենք համարում նշել նաև ՀՀ դատական կարգադրիչների ծառայության մասին: ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի 05.06.2009թ. թիվ 10-Ն որոշմամբ հաստատվել է <ՀՀ դատական դեպարտամենտ> Պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանում ստեղծելու, <ՀՀ դատական դեպարտամենտ> պետական կառավարչական հիմնարկի առանձնացված ստորաբաժանում <Դատական կարգադրիչների ծառայության> կանոնադրությունն ու կառուցվածքը:

Համաձայն վերը նշված կանոնադրության՝ Ծառայությունը կարգադրիչների ծառայությունում պետական ծառայության հատուկ տեսակ է, որի առանձնահատկությունները սահմանվում են ՀՀ դատական օրենսգրքով, Դատարանների

նախագահների խորհրդի որոշումներով եւ սույն կանոնադրությամբ: Կարգադրիչների ծառայությունում ծառայող քաղաքացին պետական ծառայող է: Կարգադրիչների ծառայությունը գործում է ՀՀ դատական դեպարտամենտի կազմում և ապահովում է դատարաններում դատավորի, դատավարության մասնակիցների, դատական ծառայողների եւ այլ անձանց կյանքի, առողջության եւ արժանապատվության, իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը հանցավոր եւ հակաիրավական այլ ոտնձգություններից, տեղում անմիջական կատարման ենթակա դատարանի կարգադրությունների կատարումը, Դեպարտամենտի կառուցվածքային եւ առանձնացված ստորաբաժանումներում հասարակական կարգի պահպանումը եւ անվտանգության ապահովումը, գույքի, ինչպես նաեւ շենքի եւ դրա սպասարկման տարածքի պահպանությունը:

ԵՆԽՎ Մոնիթորինգի հանձնաժողովի 2010թ. հունիսին կայացած նիստում, երբ քննարկվում էր Հայաստանի հարցը՝ ներկաներին էր բաժանվել ՀՀ արդարադատության նախարարության կազմած ամփոփ ուղեցույցը՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ՀՀ-ում <Դատավարությունների դիտարկում> զեկույցից բխող օրենսդրական եւ գործնական միջոցառումների մասին: Զեկույցում առաջարկ է եղել դատական կարգադրիչների ծառայության վարքագծի կանոնակարգի մասին, որի առնչությամբ նշված է. <Սույն փաստաթուղթը պատրաստելու պահին դատական դեպարտամենտում արդեն իսկ մշակվել է դատական կարգադրիչների վարքագծի կանոնների նախագիծ, որը Դատավորների նախագահների խորհրդի առաջիկա նիստում դրվելու է քննարկման>: Մակայն, հարկ է նկատել, որ այն մինչև օրս չի ընդունվել և հրապարակվել, այդ կապակցությամբ էլ այստեղ էլ է հարց առաջանում, թե մինչև օրս դատական կարգադրիչները ոչ դատական գործունեության ընթացքում ինչպիսի վարքագծի կանոններով են առաջնորդվել:

Այս ոլորտում ևս դրական արդյունքներ չենք արձանագրում, սույն Ծառայության գործելաձևը ավելի հստակ ներկայացնելու համար, մեջբերում ենք մամուլի հրապարակումներից մեկը՝ մեղադրյալ Աշոտ Հարությունյանի գործով.

5) <ԺԱՄԱՆԱԿ> օրաթերթ 1in.am 23:58 Իրավունք | Ուրբաթ 22.04.2011 | Էլմիրա Մարտիրոսյան

<Եթե Արդարադատության Խորհուրդը պատժի դատավորին՝ Հատուկ քննչական ծառայությունը պետք է դատավորով զբաղվի>>

Եթե Արդարադատության խորհուրդը էթիկայի կանոնները խախտելու համար կարգապահական պատասխանատվության ենթարկի վարչական դատարանի դատավոր Արման Թովմասյանին, ապա Հատուկ քննչական ծառայությունը ստիպված կլինի՝ իր լիազորությունների սահմաններում զբաղվել նրանով: Մա «Մախարովի» անվան մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպության իրավաբան Մերի Խաչատրյանի կարծիքն է՝ հիմնված մի գործի հանգամանքների շուրջ արված վերլուծությունների վրա: Իսկ ի՞նչ է արել դատավորը կամ՝ ինչի՞ մեջ են նրան կասկածում: Պաշտպանական կողմի պնդմամբ, դատավորը դատական կարգադրիչների հետ հա՛մ ձեռն է վանաձորցի, շարքային քաղաքացի Աշոտ Հարությունյանին, հա՛մ էլ գործը շուտ են տվել նրա դեմ. կարգադրիչները դարձել են տուժող, Ա.Հարությունյանը՝ մեղադրյալ, իսկ դատավորին փորձում են արանքից հանել. նրան ո՛չ տուժող են ճանաչել, ո՛չ մեղադրյալ, թեև բուն միջադեպը նրա հետ է տեղի ունեցել: 30-ամյա Արման Թովմասյանը, ով մինչև նախորդ տարվա դեկտեմբերը աշխատել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության

դատարանի դատավոր, 2010թ. նոյեմբերի 8-ին գիշերվա ժամը 23.30-ի սահմաններում մտել է Ստեփանավանի մթերային խանութներից մեկը՝ առևտուր անելու: Այստեղ հանդիպել է Աշոտին, եւ վերջինիս հոր պատմելով, անհասկանալի պատճառով սկսել երկար նայել Աշոտին: Վանաձորցին էլ միամտություն է ունեցել նրան հարցնելու, թե իրենք ծանոթ են... Վանաձորցուն բնորոշ հենց այդ հարցն էլ զայրացրել է դատավորին: Վերջինս Աշոտին առաջարկել է նստել մեքենան ու քշել իր հետեւից: Դե Աշոտն էլ խելոք նստել ու հետեւից գնացել է դատարանի բակ, մտել կողմնակի անձանց համար արգելված, ցանկապատված գոտի: Ու այստեղ, երբ Աշոտը մեքենայից դուրս է եկել, դատավորը տեղում եղած երկու եւ դեպքի վայր ժամանած եւս երկու կարգադրիչների հետ միասին մոտավորապես գիշերվա ժամը 24-ի հատվածում սկսել է ձեռնել Աշոտին՝ հենց դատարանի բակում: Բայց դատավորի բախտն այստեղ այնքանով չի բերել, որ Աշոտի մեքենայի ապակիները մզեցված են եղել, նա ու պետական բյուջեից վարձատրվող, բայց դատավորին թիկնապահական «ծառայություններ» մատուցած կարգադրիչները չեն նկատել մեքենայի մեջ գտնվող Նունե Պառավյանին: Միայն վերջինիս հանկարծակի հայտնվելուց հետո են նրանք դադարեցրել ձեռք, երբ վերջինս սպառնացել է ոստիկան կանչել, եթե չդադարեցնեն: Բայց ի զարմանս այս վկայի՝ հենց հաջորդ օրը առավոտյան, ոստիկանները մտել են Աշոտ Հարությունյանի տուն, նրան տարել բաժին: Աշոտին մեղադրանք է առաջադրվել իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալու համար, այնուհետեւ նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը: Սկզբում գործը քննել է ոստիկանությունը. ասում են՝ գլխավոր դատախազը սկզբում թույլ չի տվել այն ուղարկել ՀՔԾ, որը զբաղվում է պաշտոնատար անձանց վերաբերյալ քրեական գործերի քննությամբ: Այդ ընթացքում ՔԿՀ-ում Աշոտ Հարությունյանը սուր ցավեր է ունեցել, ի նշան իր նկատմամբ կատարված անօրինության՝ հացադուլ հայտարարել, ու չնայած փորձագետի եզրակացությանը, որով փաստվել է, որ Աշոտի վրա կան բազմաթիվ մարմնական վնասվածքներ՝ սալջարդեր, կապտուկներ, կալանքը երկարացվել է: Եվ միայն շատ ավելի ուշ է նրա խափանման միջոցը փոխարինվել բնակավայրից չհեռանալու մասին ստորագրությամբ Ֆառանց պաշտպանի ներկայության^ա, երբ Աշոտի հայրը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՔԾ եւ իրավապաշտպաններն էլ սկսել են ակտիվորեն հետաքրքրություն ցուցաբերել այդ գործի նկատմամբ եւ բազմաթիվ հարցադրումներ են ուղղել ՀՀ նախագահին, Արդարադատության խորհրդին, ՀՔԾ-ին: Ի վերջո, գործն ուղարկվել է ՀՔԾ վարույթ, որտեղ նախնական տեղեկատվության համաձայն՝ հանգամանքները մի քիչ այլ կերպ են ներկայացվել: Աշոտը դեպքի օրը, ակոհով օգտագործած վիճակում խանութում գնումներ կատարելիս հանդիպել է դատավոր Ա.Թովմասյանին, ում ճանաչելով որպես 2010թ. հոկտեմբերի 28-ին իր եւ հոր՝ Ս.Հարությունյանի վերաբերյալ քաղաքացիական գործով իրենց շահերին ի վնաս վճիռ կայացրած դատավորի, վիրավորել է նրան եւ պահանջել առանձնանալ եւ զրուցել: Դատավորը, տեսնելով, որ նա հարբած է, փորձել է չառնչվել նրա հետ եւ իր ավտոմեքենայով գնացել է դատարանի բակի վերոնշյալ պահպանվող հատված: Աշոտն էլ հետեւելով մտել է ներս եւ իբր վիրավորելով դատավորին՝ սպառնացել է, որ կձեռնի: Իսկ երբ կարգադրիչները փորձել են կարգի հրավիրել նրան, Աշոտն իբր նրանց ձեռնել ու քաշքշել է: Եվ դա իբր շարունակել է նաեւ 10 րոպե անց՝ իր ավտոմեքենայում գտնվող Նունե Պառավյանին տուն ճանապարհելուց եւ վերադառնալուց հետո: Այսինքն՝ գործը ՀՔԾ է հասել ոչ թե դատավորին, այլ կարգադրիչներին դիմադրություն ցույց տալու հիմքով, դրա համար էլ դատավորն արանքից դուրս է եկել եւ նույնիսկ տուժողի կարգավիճակ չի ստացել: Իրավապաշտպան կազմակերպության իրավաբան Մերի Խաչատրյանը «Առաջին

լրատվական»-ի հետ հեռախոսագրույցում նշեց, որ իրենք բազմաթիվ դիմումներ են հղել իրավասու տարբեր ատյաններ՝ պատշաճ քննություն տանելու, գործի էական հանգամանքները պարզելու, դատավորի նկատմամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ: Մասնավորապես, դեպքը եղել է գիշերվա 12-ին, եւ կարգադրիչները, ովքեր միայն աշխատանքային ժամին են պատասխանատու դատարանի, դատական նիստերի դահլիճի կարգուկանոնի եւ դատավորի անվտանգության պահպանման համար, իրավունք չունեին պաշտպանել Արման Թովմասյանին, քանի որ նա այդ ժամին հանդես չէր գալիս որպես դատավոր: Հետաքրքիր է, որ դատարանի այդ տարածքը նաեւ տեսագրվում է, եւ երեւի թե այդ տեսաձայնագրությունը հետագոտելն էլ բավական կլիներ քննությունը ճիշտ ուղղությամբ տանելու համար: Ինչեւէ, իրավապաշտպան կազմակերպությունը հորդորել է ՀՔԾ-ին քրգործ հարուցել իրական օրինազանցների գործողությունների փաստով, դիմել Արդարադատության խորհուրդ՝ դատավորի անձեռնմխելությունից զրկելու Արման Թովմասյանին, եւ նորմալ քննություն տանել: Այդ դեպքում գուցե պարզվի՝ ով է իրականում մեղավոր: Մ.Խաչատրյանի կարծիքով, եթե ԱԽ-ը կարգապահական պատասխանատվության ենթարկի դատավորին՝ դատավորի էթիկայի կանոնները խախտելու համար, հնարավոր է ՀՔԾ-ն համարձակվի ճիշտ գնահատական տալ դատավորի եւ կարգադրիչների գործողություններին եւ որոշի նրանց իրական կարգավիճակը:

Հ. Գ.

Ու՞մ հրահանգով են դատական կարգադրիչները բացել դատարանի բակի դարբասները և թույլ տվել Ա. Հարությունյանին, այն էլ ավտոմեքենայով, մուտք գործել դատարանի բակային տարածք կամ գիշերը՝ ժամը 24.00-ից հետո դատավորն ի՞նչ իրավունքով է մուտք գործել դատարանի տարածք և փորձել իր անձնական հարաբերությունները՝ <ռազբորկան>, իրականացնել հենց դատարանի տարածքում... Այն որ դատավոր Ա. Թովմասյանը թույլ է տվել ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի 23.04.2010թ. թիվ 01Ն որոշմամբ հաստատված ՀՀ դատավորի վարքագծի 5 և 11 կանոնների, ինչպես նաև նույն որոշմամբ հաստատված <Դատավորի վարքագծի կանոնները ոչ դատական գործունեության ընթացքում> 20, 21 1-ին մասի, 23 կանոնների պահանջները, դա փաստ է, բայց որ վերջինս անձեռնմխելի անձ է և ՀՀ ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի կողմից նա չի կարող հարցաքննվել, հետևաբար սույն քրեական գործի նախաքննությունն ընթանում է ոչ օբյեկտիվ և միակողմանի, ինչի արդյունքում ընդունվել է ապօրինի որոշում: Դատավորի կողմից վարքագծի կանոնագրքի պահանջների խախտում հայտնաբերելիս անհրաժեշտության դեպքում այդ մասին համապատասխան հաղորդում պետք է ներկայացվեր Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողով և ՀՀ արդարադատության խորհուրդ՝ կարգապահական հանձնաժողով, որոնց կողմից կայացված որոշումը կարող է էական նշանակություն ունենալ սույն քրեական գործի արդարացի և օբյեկտիվ լուծմանը: Մակայն մինչև օրս նախաքննության մարմնի կողմից որևէ հայտարարություն չի տրվել լիազոր մարմիններին: Իսկ Դատական կարգադրիչների վարքագծի կանոնների բացակայությունն էլ կարող է խոչընդոտ հանդիսանալ սույն քրեական գործի օբյեկտիվ և արդարացի լուծմանը: Այս հարցը ևս քննարկման առարկա պետք է դարձվեր ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի կողմից, սակայն հարցին էական նշանակություն չի տրվել այդ մարմինների կողմից: Նախաքննության մարմինը պետք է պարզեր արդյո՞ք այդ դատական կարգադրիչների գործողություններն եղել են իրավաչափ և համարժեք

ժողովրդավարական հասարակությունում, արդյո՞ք նրանք կատարել են դատավորի օրինական կամ անօրինական կարգադրությունը՝ ոչ դատական գործունեության ընթացքում, թե՛ ոչ: Մույն քրեական գործը դեռևս իր տրամաբանական լուծումը չի ստացել, իսկ դատական կարգադրիչների վարքագծի կանոնները՝ չեն ընդունվել:

1.2. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ՁՈՂԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐ

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 16.12.1966թ.2200 Ա /XXI/ բանաձևով ընդունված <Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին> միջազգային դաշնագրի 9-րդ հոդ. 5-րդ մասի համաձայն յուրաքանչյուր ոք, ով դարձել է անօրինական ձերբակալման կամ կալանքի տակ պահվելու գոհ, իրավունք ունի հայցային ուժ ունեցող փոխհատուցման:

Այնուհետև, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 29.11.1985թ. 40/34 բանաձևով ընդունվել է <Հանցագործությունների և իշխանության չարաշահման գոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների հռչակագիրը>: Մույն հռչակագրում ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան կոչ է անում անդամ պետություններին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հռչակագրի բովանդակած դրույթներն իրականացնելու համար: Հռչակագրին միանալուց անցել է արդեն երկու տասնամյակ, սակայն ՀՀ ներպետական օրենսդրությունը դեռևս թերի է նշված հռչակագրի պահանջների համեմատ: ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չեն հանցանքի, իշխանության չարաշահման գոհերի նկատմամբ արդյունավետ արդարադատության իրականացման իրավունքներն ու կարգը:

Հանցագործությունների և իշխանության գոհերի հանդեպ արդարադատության արդյունավետ իրականացման ու կրած վնասի արդյունավետ փոխհատուցում պահանջելու իրավակարգավորման հարցի կապակցությամբ ուշագրավ է ՀՀ սահմանադրական դատարանի ՀՀ վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ <Պետական տուրքի մասին> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 14.12.2010թ. որոշումը:

Վերը նշված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադարձել է հանցագործությունից տուժողի կրած վնասների, ինչպես նաև պաշտոնատար անձի գործողությունների կամ անգործության հետևանքով անձին պատճառված վնասի փոխհատուցման, <Պետական տուրքի մասին> ՀՀ օրենքով նախատեսված դատարաններում պետական տուրքի գծով արտոնություններ տրամադրելու հարցին:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշմամբ նշել է, որ օրենսդիրը պետք է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդ. 4-րդ մասում (օրենքը կարող է նախատեսել անձին ազատությունից զրկում, երբ առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով) և 20-րդ հոդ. 5-րդ մասում (տուժողին պատճառված վնասը հատուցվում է օրենքով սահմանված կարգով) ամրագրված իրավունքների արդյունավետ ու անարգել իրացման նպատակով սահմանի արտադատական կամ դատական կարգով փոխհատուցման պահանջ ներկայացնելու արդյունավետ և գործուն համակարգ:

Միննույն ժամանակ, նշել է, որ <Սահմանադրական դատարանն իրավական պետության սկզբունքի տեսանկյունից իրավաչափ չի համարում այն իրողությունը, երբ

հետևողականություն չի դրսևորվում տվյալ իրավակարգավորման հարցում և պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն չի նախատեսում արդարացված անձի համար, ով դատարան է դիմում իրեն պատճառված վնասի հատուցման պահանջով>:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման պարագայում <Պետական տուրքի մասին> ՀՀ օրենքի 22-րդ հոդ. 1-ին մասում առկա իրավակարգավորման շրջանակներում լիարժեք չի երաշխավորում ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդ. 5-րդ մասի նորմատիվ կիրառումը՝ խոչընդոտելով տուժող հանդիսացող անձի հատուցում ստանալու իրավունքի իրավաչափ ու արդյունավետ իրացումը: Գործող իրավակարգավորումը վկայում է, որ կիրառված միջոցի և հետապնդված նպատակի միջև չկա ողջամիտ համաչափություն՝ ստեղծվել է ոչ իրավաչափ հավասարակշռություն անձի խախտված իրավունքների վերականգնման և պետության շահերի պաշտպանության միջև, որն աղավաղում է պատճառված վնասի հատուցման սահմանադրական իրավունքի էությունը: Նման վիճակից խուսափելու նպատակով է, որ բազմաթիվ երկրների (Սլովենիա, Էստոնիա, Ռուսաստանի Դաշնություն, Լատվիա, Լիտվա և այլն) նույնաբնույթ օրենքներում հստակ նորմ է սահմանվում, որ ապօրինի դատապարտման, ապօրինի քրեական պատասխանատվության ենթարկելու հետևանքով պատճառված վնասի հատուցման գործերով կողմերն ազատվում են պետական տուրքի վճարումից: Նախատեսվում է նաև արդարացվածի համար առավել մատչելի՝ վնասի հատուցման արտադատական ընթացակարգ:

Ըստ գործի նյութերի՝ Հայաստանի Հանրապետությունում ոչ միայն նման ընթացակարգ գոյություն չունի, այլև ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ առաջին աստիճանի դատարանի որոշման առկայության դեպքում, որով անձը ճանաչվել է տուժած և նախատեսվել է պատճառված վնասի հատուցում, վերաքննիչ բողոքի դեպքում նույնպես անձը չի ազատվում պետական տուրքի վճարումից: Փաստորեն ապօրինի քրեական հետապնդման ենթարկվելու դեպքերում հասցված վնասի հատուցում պահանջելու համար անձն ստիպված է վճարել պետական տուրք, որի չափը կարող է ընդհուպ գերազանցել հատուցվելիք գումարը: Սույն խնդիրը համալիր իրավակարգավորման անհրաժեշտություն ունի, որը պետք է, մի կողմից, հաշվի առնի, որ անձին վնաս կարող է պատճառվել նաև հանրային իշխանության մարմինների գործողությունների (անգործության) հետևանքով: Մյուս կողմից՝ արդարացված անձին ապօրինաբար պատճառված վնասը հատուցելը և նրա խախտված իրավունքները վերականգնելը պետք է դիտվեն որպես սահմանադրական անվերապահ պահանջ, որպես անձի իրավունք, իսկ այն իրացնելու օրենսդրական ընթացակարգերը չեն կարող աղավաղել այդ իրավունքի էությունը կամ օրենքի բացի արդյունքում ընդհուպ արգելափակել այն:

Ելնելով վերոշարադրյալից, ՀՀ սահմանադրական դատարանը որոշել է.

<<Պետական տուրքի մասին> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասը, այնքանով, որքանով չի սահմանում, այլ սուբյեկտներից բացի, արդարացվածին՝ իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության) հետևանքով պատճառված վնասի հատուցման հայցերով պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ արտոնություն նախատեսող դրույթ՝ արգելափակելով անձի սահմանադրական իրավունքի իրացումը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասին և 20-րդ հոդվածի 5-րդ մասին հակասող և անվավեր:

Հաշվի առնելով, որ տվյալ խնդրի իրավաչափ լուծումը և օրենքի բացի հաղթահարումը նաև օրենսդրական փոփոխությունների և համալիր

իրավակարգավորման անհրաժեշտություն է ենթադրում, ինչպես նաև նկատի ունենալով, որ <Պետական տուրքի մասին> ՀՀ օրենքի՝ վեճի առարկա հողվածի անմիջական անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի ծանր հետևանքներ այդ հողվածի առկա՝ սահմանադրականության խնդիրներ չառաջացնող, դրույթների իրացման և մարդու իրավունքների պաշտպանության առումով՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավանորմի ուժը կորցնելու վերջնական ժամկետ է սահմանել 2011թ. հունիսի 30-ը:>>:

ՀՀ Ազգային ժողովը 03.03.2011թ. առաջին ընթերցմամբ ընդունել է <Պետական տուրքի մասին> ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը, որի ամբողջովին ընդունվելու դեպքում <Պետական տուրքի մասին> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը կհամալրվի <է¹), է²), է³) և է⁴)> կետերով և պետական տուրքի վճարումից կազատվեն նաև.

է¹) արդարացվածները՝ իրենց անօրինական ձեռքակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու եւ դատապարտման հետեւանքով պատճառված վնասի գույքային հատուցման հայցերով.

է²) արդարացվածները՝ նախկին աշխատանքում (նախկին պաշտոնում) վերականգնման, իսկ դրա անհնարինության դեպքում՝ համարժեք աշխատանք (պաշտոն) ստանալու կամ նախկին աշխատանքը (պաշտոնը) կորցնելու հետեւանքով պատճառված վնասի դրամական փոխհատուցման հայցերով.

է³) արդարացվածները՝ ազատագրվման, կալանքի կամ ազատության սահմանափակման ձեռով պատիժը կրելու, ինչպես նաև կարգապահական գումարտակում պահվելու ժամանակը բոլոր տեսակի աշխատանքային ստաժների մեջ հաշվակցելու հայցերով.

է⁴) արդարացվածները՝ նախկինում զբաղեցրած բնակելի տարածքը հետ ստանալու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ բնակմակերեսով եւ գտնվելու վայրով համարժեք բնակելի տարածք ստանալու հայցերով>:

Սակայն մինչ օրս ՀՀ Ազգային ժողովի կողմից <Պետական տուրքի մասին> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին սույն օրենքի նախագիծը չի ընդունվել և ՀՀ սահմանադրական դատարանի կողմից մինչև 30.06.2011թ. փոփոխություն կատարելու պահանջը ՀՀ Ազգային ժողովի կողմից չի կատարվել: Փաստորեն, 30.06.2011թ. <Պետական տուրքի մասին> ՀՀ օրենքի 22-րդ հոդ. 1-ին մասն անվավեր է, և որևէ այլ իրավական ակտով այդ ոլորտը չի կարգավորվում:

Հարկ է նկատել նաև, որ <Հանցագործությունների և իշխանության չարաշահման գոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների հռչակագրի> և ՀՀ ներպետական օրենսդրության միջև կա որոշակի տարբերություններ և անհամապատասխանություն: Դրանք են.

1. ՀՀ ներպետական օրենսդրության մեջ <Հանցագործության կամ իշխանության չարաշահման գոհ> հասկացություն չկա: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ինչպես նաև ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով օգտագործվում է միայն <տուժող> հասկացությունը, որը սակայն ամբողջությամբ չի արտահայտում հիշյալ հռչակագրով սահմանված <գոհ> հասկացության էությունը և չի վերապահում այն իրավունքները, որոնք ունի հռչակագրով սահմանված <Հանցագործության կամ իշխանության չարաշահման գոհը>:

2. Անձը, ով նախաքննության մարմնի կողմից ճանաչվել է տուժող, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդ. համաձայն քրեական դատավարությունում քաղաքացիական հայց կարող է հարուցել յուրաքանչյուր պահի՝ սկսած քրեական գործի

հարուցումից մինչև դատարանի հեռանալը խորհրդակցական սենյակ, սակայն Հռչակագրով սահմանված սկզբունքներն ու ընթացակարգերը բացակայում են հիշյալ օրենսգրքերից:

3. Սույն Հռչակագրի 4-րդ կետը սահմանում է գոհերի արագ վնասի փոխհատուցում ստանալու հնարավորությունը, սակայն ՀՀ օրենսդրությամբ որևէ ժամկետ սահմանված չէ: ՀՀ քրեական, քաղաքացիական և վարչական դատավարությունների օրենսգրքերով օգտագործվում է <ողջամիտ ժամկետ> հասկացությունը: Զոհերի ճանաչումը, նրանց կողմից արագ վնասի փոխհատուցում ստանալու իրավունքն ու դրա իրացումն ու ժամկետները պետք է ամրագրված լինեն առնվազն օրենքներով:

4. Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում թվարկված են տուժողի անվտանգությունն ապահովող դրույթները, սակայն գործնականում դրանք արդյունավետ չեն և չեն կիրառվում:

5. ՀՀ օրենսդրությամբ չի սահմանվում նաև դրույթներ, որոնց միջոցով տուժողին կտրվի պատշաճ օգնություն, օրինակ՝ անվճար փաստաբանական ծառայություն: Տուժողներն իրենց սոցիալական վատ վիճակից ելնելով հաճախ չեն կարողանում իրենց իրավունքների պաշտպանությունն իրականացնել ըստ պատշաճի և օրինական պահանջները ներկայացնել իրավապահ և դատական մարմիններին:

6. Ի տարբերություն հռչակագրի պահանջների՝ ՀՀ քրեական օրենսդրությամբ անձին պատճառված վնասի ռեստիտուցիայի ձևով պատժատեսակ չի նախատեսվում:

7. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ նաև սույն Հռչակագրով սահմանված պետության կողմից տուժողին /գոհին/ փոխհատուցում տրամադրելու պարտավորությունը և ՀՀ իշխանության կողմից որևէ ֆոնդերի ստեղծում, որոնց կուտակված միջոցների հաշվին կփոխհատուցվեն տուժողների /գոհերի/ կրած վնասները:

8. Համապատասխան միջազգային կազմակերպությունների գնահատականներով ՀՀ ունի թրաֆիկինգի գոհեր, ինչպես նաև հանդիսանում է թրաֆիկինգի գոհերի տարանցիկ պետություն: Սակայն թրաֆիկինգի դեմ պայքարի քրեական պատժամիջոցները ՀՀ օրենսդրությամբ խստացնելով, մենք ոչ մի կերպ չենք կարող պաշտպանել թրաֆիկինգի գոհերին:

Օրինակ, անվճար իրավաբանական օգնության տրամադրման պարտադիր նորմի բացակայությունը, անվճար իրավաբանական օգնության համար անհրաժեշտ արդյունավետ օրենսդրական կարգավորումներ չկան: <Փաստաբանության մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդ. սահմանափակ թվով դեպքեր է նախատեսում, երբ մարդիկ կարող են օգտվել անվճար իրավաբանական օգնությունից: Դրանց թվում են որոշակի տեսակի քրեական գործեր և մի քանի քաղաքացիական գործ: Մնացած բոլոր դեպքերում, անկախ մարդու ֆինանսական վիճակից, անվճար իրավաբանական օգնություն նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ, չնայած անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը երաշխավորված է ոչ միայն միջազգային պայմանագրերով, այլ նաև ՀՀ սահմանադրությամբ:

Հաշվի առնելով ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կոչը՝ սույն Հռչակագրի միջոցով, և ելնելով Հայաստանի Հանրապետությունում հանցագործություններից ու իշխանության չարաշահումներից տուժածների /գոհերի/ իրավունքների արդյունավետ պաշտպանության և նրանց խախտված իրավունքների վերականգնման անհրաժեշտությունից, անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ իշխանությունն իր կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակում, որպես պարտադիր պայման, ներպետական օրենսդրությունը համապատասխանեցնի ՄԱԿ-ի <Հանցագործությունների և իշխանության չարաշահման

զոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների հոչակագրի> դրույթներին, քանզի սույն հոչակագիրն առավելագույնս սահմանում է զոհերին փոխհատուցում տալու արդյունավետ կարգավորման հիմքերը:

2. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐ ԵՎ ՆՐԱՆՑԻՑ ԾՆՎԱԾ ԵՐԵՆԱՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունն իր զեկույցում անդրադարձել է փախստականներին ու ապաստան հայցող անձանց իրավունքներին և նրանց ունեցած հիմնախնդիրների լուծմանը: Սակայն ամբողջական չի ներկայացրել այն հիմնախնդիրները, որոնք այսօր կան ՀՀ-ում և դեռևս իրենց իրավական ու տրամաբանական լուծումը չեն ստացել:

Չնայած, ՀՀ իշխանությունները վկայակոչել են, որ մշտապես ձեռնարկել են հնարավոր բոլոր միջոցները ՀՀ-ում ապաստան հայցողների և փախստական ճանաչված անձանց միջազգային նորմերով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավունքների և ազատությունների լիարժեք և հավասար պաշտպանությունը երաշխավորելու համար, սակայն դա այդպես չէ:

Միջազգային մակարդակով փախստականների իրավական վիճակը, փախստականի կարգավիճակ տալու պայմաններն ու կարգն ամրագրված են այնպիսի փաստաթղթերում, ինչպիսիք են ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 28.07.1951թ. ընդունված <Փախստականների կարգավիճակի մասին> կոնվենցիան և Ժնևի 04.10.1967թ. կից Արձանագրությունը, որոնց Հայաստանը միացել է 12.04.1993թ., որն ուժի մեջ է մտել 04.10.1993թ., և դրանց դրույթներն ամրագրել է 03.03.1999թ. ՀՀ ԱԺ կողմից ընդունված <Փախստականների մասին> ՀՀ օրենքում, այնուհետ՝ 27.11.2008թ. ՀՀ ԱԺ կողմից ընդունված <Փախստականների և ապաստանի մասին> ՀՀ նոր օրենքում, որով ուժը կորցրած է ճանաչվել նախորդ օրենքը:

Միջազգային իրավական ակտերով միայն սահմանվում են անձին փախստական ճանաչելու չափանիշները և ընթացակարգը, իսկ նրանց իրավունքների և ազատությունների գործնական իրականացման և պաշտպանության խնդիրը թողնված է պետություններին՝ ելնելով նրանց ազգային, կրոնական, էթնիկական, աշխարհագրական և այլ առանձնահատկություններից: Քանի որ նախորդ օրենքում առկա էին մի շարք բացեր ու թերություններ, այդ նպատակով մշակվել և ՀՀ ԱԺ կողմից 27.11.2008թ. ընդունվել է <Փախստականների և ապաստանի մասին> ՀՀ նոր օրենքը, որն իբրև, համապատասխանում է <Փախստականների կարգավիճակի մասին> 1951թ. ընդունված ՄԱԿ-ի կոնվենցիայի և դրա 1967թ. Արձանագրության պահանջներին, սակայն պետք է նշենք, որ նախորդ օրենքն ավելի ամբողջական էր ներկայացնում փախստականների իրավունքներն ու պարտականությունները, քան նոր ընդունված օրենքը:

Բացի այդ, մեզ համար տեսանելի չէ փախստականներին, այդ թվում նաև անչափահաս փախստականներին հասարակարգում լիարժեքորեն ինտեգրելու ուղղությամբ ՀՀ իշխանությունների վարած այն քաղաքականությունը, որի մասին նրանք նշել են իրենց զեկույցում: ՀՀ օրենսդրությամբ ՀՀ-ում փախստականներն ունեն ՀՀ քաղաքացիներին հավասար իրավունքներ, ազատություններ և պարտականություններ, ՀՀ տարածքում կրում են ՀՀ քաղաքացիներին հավասար պատասխանատվություն, բացառությամբ մի քանի իրավունքների, դրանք են.

1. իրավունք չունեն սեփականության իրավունքով ունենալ հողամաս, այն նրանց է տրամադրվում վարձակալության հիմունքներով,
2. իրավունք չունեն մասնակցել պառլամենտական և ՀՀ նախագահական ընտրություններին, իրավունք ունեն մասնակցել միայն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին,
3. իրավունք չունեն կուսակցություններ ստեղծել և դրանց անդամագրվել, իրավունք ունեն միայն ստեղծել հասարակական միավորումներ և լինել դրանց անդամ,
4. իրավունք չունեն մասնակցել հանրային /պետական/ կառավարմանը և լինել քաղաքացիական ծառայող, իրավունք ունեն աշխատել միայն մասնավոր հատվածում,
5. պարտավոր չեն մասնակցել ՀՀ պաշտպանությանը, իրավունք ունեն՝ կամավորության հիման վրա մասնակցել ՀՀ պաշտպանությանը:

ՀՀ տարածքում փախստականի կարգավիճակ ստացած փախստականներն իրավունք ունեն օգտվելու ՀՀ օրենսդրությամբ ՀՀ քաղաքացիների համար սահմանված սոցիալական ծառայություններից, ստանալու պետական նպաստներ և դրամական այլ օգնություն, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում, ինչպես նաև ունեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակային ապահովության, գործազրկության դեպքում՝ սոցիալական պաշտպանության իրավունք, եթե նրանք բավարարում են տվյալ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

ՀՀ քաղաքացիական, քրեական և վարչական դատավարությունների օրենսգրքերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք կարող է իր խախտված իրավունքները պաշտպանելու համար դիմել դատական ատյաններ, ինչը տարածվում է նաև փախստականների և ապաստան հայցողների նկատմամբ: <Փախստականների և ապաստանի մասին> ՀՀ օրենքով երաշխավորվում է մերժում ստացած ապաստան հայցողների դատական պաշտպանության իրավունքը: Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում ապաստան հայցողները և փախստականներն ունեն ՀՀ-ում օրինական հիմքերով բնակվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ հավասար իրավունքներ և պարտականություններ:

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ մեր հանրապետությունում շարունակում են չլուծված մնալ 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած մեր հայրենակիցների ՀՀ սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված իրենց և իրենց ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունքի ապահովման, քոթեջների և դրանցով ծանրաբեռնված հողամասերի անհատույց սեփականաշնորհման իրավունքի ճանաչման և պետական գրանցման ներկայացնելու, նրանցից ծնված երեխաների կարգավիճակի կամ քաղաքացիության որոշման և այլ կարգի հարցեր:

2.1 ՀՀ-ում փախստականներից ծնված երեխաների կարգավիճակի որոշման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում

ՄԱԿ-ի 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 15-րդ հոդվածով յուրաքանչյուր ոք ունի քաղաքացիության իրավունք, ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր քաղաքացիությունից կամ իր քաղաքացիությունը փոխելու իրավունքից:

<Քաղաքացիական և քաղաքական> միջազգային դաշնագրի 24-րդ հոդ. համաձայն.

1. Յուրաքանչյուր երեխա, առանց ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային դրության կամ ծննդի հատկանիշով որևէ խտրականության, իրավունք ունի իր ընտանիքի, հասարակության և պետության կողմից պաշտպանվածության այնպիսի միջոցների, որոնք անհրաժեշտ են նրան որպես անչափահասի:

2. Յուրաքանչյուր երեխա ծնվելուց անմիջապես հետո պետք է գրանցվի և ունենա անուն:

3. Յուրաքանչյուր երեխա ունի քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

ՀՀ-ում փախստականներից ծնված երեխաների կարգավիճակի որոշման գործընթացն իրավական տեսանկյունից ունի բացեր ու հակասություններ իր իսկ կողմից վավերացված ՀՀ օրենսդրության մաս կազմող միջազգային պայմանագրերով /իրավական ակտերով/ սահմանված սկզբունքների ու պահանջների հետ: ՀՀ-ում փախստականների կողմից ՀՀ քաղաքացիություն ընդունելու կամ նրան ՀՀ քաղաքացի ճանաչելու գործընթացը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան չի կատարվում:

ՀՀ սահմանադրության 30.1-րդ հոդ. <ՀՀ քաղաքացիներից ծնված երեխան ՀՀ քաղաքացի է: Յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը ՀՀ քաղաքացի է, ունի ՀՀ քաղաքացիության իրավունք: ՀՀ քաղաքացիության ձեռքբերման դադարման կարգը սահմանվում է օրենքով:>:

06.11.1995թ. ՀՀ ԱԺ կողմից ընդունված <ՀՀ քաղաքացիության մասին> ՀՀ օրենքի 1-ին հոդ. 2-րդ մասի համաձայն <Յուրաքանչյուր անձ, օրենքով սահմանված կարգով, ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք ունի: Ազգությամբ հայերը ՀՀ քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով:>:

ՀՀ քաղաքացիության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդ. համաձայն ՀՀ քաղաքացիություն ձեռք է բերվում՝ 1) քաղաքացիության ճանաչմամբ, 2) ծնունդով, 3) քաղաքացիություն ստանալու միջոցով, 4) քաղաքացիությունը վերականգնելու միջոցով, 5) քաղաքացիության խմբային ձեռքբերման միջոցով (ներգաղթի և օրենքով սահմանված այլ դեպքերում՝ ՀՀ նախագահի հրամանագրով):

Նույն օրենքի 10-րդ հոդ. 2-րդ մասի համաձայն ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք կամ օտարերկրյա քաղաքացի չհանդիսացող նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքացիները, ովքեր մինչև 31.12.2012թ. դիմում են ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու համար:

Նույն օրենքի 13-րդ հոդ. համաձայն ՀՀ քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած և գործունակ յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմելու ՀՀ քաղաքացիություն ստանալու համար, եթե՝ 1) օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես բնակվել է ՀՀ-ում, 2) կարող է բացատրվել հայերեն լեզվով և, 3) ծանոթ է ՀՀ Սահմանադրությանը:

Առանց վերը նշված պահանջների պահպանման՝ ՀՀ քաղաքացիություն կարող է ստանալ ՀՀ քաղաքացիություն չունեցող այն անձը՝ 1) ով ամուսնացել է ՀՀ քաղաքացու հետ կամ ունի ՀՀ քաղաքացի երեխա. 2) ում ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է ՀՀ քաղաքացիություն կամ ծնվել է ՀՀ-ում, և ով 18 տարին լրանալուց հետո՝ 3 տարվա ընթացքում դիմել է ՀՀ քաղաքացիություն ստանալու համար. 3) ով ծագումով հայ է, այսինքն՝ ունի հայ նախնիներ. 4) ով 1995 թվականի հունվարի 1-ից հետո, իր դիմումի համաձայն, դուրս է եկել ՀՀ քաղաքացիությունից:

Ինչպես հայտնի է միջազգային իրավունքում անձի քաղաքացիության ընդունման և որոշման հարցերում պետություններն առաջնորդվում են մի շարք սկզբունքներով, հատկապես արյան և հողի իրավունքներով.

Արյան իրավունքի սկզբունքի իմաստն այն է, որ տվյալ պետության քաղաքացիներից ծնված երեխան, անկախ այն բանից, թե նա որտեղ, որ երկրում է ծնվել, ճանաչվում է այդ պետության քաղաքացի /այդ պետություններն են Հայաստանը, Ռուսաստանը, Ադրբեջանը, Ղազաստանը և այլն/: Այս սկզբունքն ամրագրված է ՀՀ սահմանադրության 30.1-րդ հոդվածում և <ՀՀ քաղաքացիության մասին> ՀՀ օրենքում:

Հողի իրավունքի սկզբունքը, ի տարբերություն օարյան իրավունքի, նշանակում է, որ տվյալ պետությունում քաղաքացիություն է շնորհվում բոլոր այն անձանց, ովքեր ծնվել են նրա տարածքում, անկախ այն բանից, թե նրա ծնողները որ պետության քաղաքացիներ են հանդիսանում /Մեքսիկա, Բրազիլիա, Լատինական Ամերիկայի այլ պետություններ/:

Սակայն իրավակիրառ պրակտիկայում ՀՀ իշխանությունները 1988-1992թթ. Ադրբեջանից Հայաստան բռնագաղթած և ՀՀ պետական լիազոր մարմնի կողմից փախստականի կարգավիճակ ունեցող անձանցից ծնված երեխաներին չեն ճանաչում փախստական և իրենց գրություններով այդ երեխաներին, ովքեր ծնվել են ՀՀ տարածքում, ճանաչում են ՀՀ քաղաքացի, առանց հաշվի առնելու նրա կամքը և համաձայնությունը ՀՀ քաղաքացիության ընդունման գործընթացում, ինչը պահանջվում է թե ազգային, թե միջազգային իրավական ակտերով: ՀՀ իշխանությունները ղեկավարվում են քաղաքացիության որոշման հողի իրավունքի սկզբունքով, ինչը ՀՀ սահմանադրությամբ նախատեսված չէ:

Իսկ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը ՀՀ միգրացիոն պետական ծառայության հարցումներին պատասխանում է, որ <ՀՀ քաղաքացիության մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդ. համաձայն ՀՀ-ում ծնված երեխան, ում ծնողները քաղաքացիություն չունեցող անձինք են, ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն: Երբեմն էլ տալիս է հետևյալ պատասխանը՝ կոնկրետ երիտասարդների քաղաքացիությունը պարզել հնարավոր չէ, քանի որ նրանք ՀՀ քաղաքացու անձնագրով չեն փաստաթղթավորվել: <Փախստականների և ապաստանի մասին> ՀՀ օրենքի 36-րդ հոդ. ամրագրված են ՀՀ ոստիկանության լիազորությունները, ըստ որի սույն իրավահարաբերություններում նա ընդամենը անձի ինքնության մասին տեղեկատվություն տրամադրող մարմին է, այլ ոչ թե <ՀՀ քաղաքացիության մասին> ՀՀ օրենքի վերաբերյալ մեկնաբանություններ անող և ՀՀ քաղաքացիություն շնորհող:

ՀՀ իշխանությունները ՀՀ-ում բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց կողմից ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու հարցում վարում են հարկադրական և պարտավորեցնող քաղաքականություն և խոչընդոտում են նրանց կողմից ՀՀ քաղաքացիություն կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքի իրացմանը, որը երաշխավորված է, ոչ միայն ՀՀ սահմանադրությամբ, այլ նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով և սույն Դաշնագրով և այլ միջազգային հանրաճանաչ նորմերով:

ՀՀ քաղաքացիություն ընդունելը և ՀՀ անձնագիր ստանալը յուրաքանչյուր անձի իրավունքն է և պահանջվում է չափահաս անձի, իսկ անչափահասի դեպքում՝ օրինական ներկայացուցչի գրավոր դիմումը /համաձայնությունը/: Այդ է պահանջվում նաև <ՀՀ քաղաքացիության մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով՝ ըստ որի ՀՀ քաղաքացիներ են ճանաչվում՝ ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք կամ օտարերկրյա քաղաքացի չհանդիսացող նախկին ԽՍՀՄ այլ

հանրապետությունների քաղաքացիները, ովքեր մինչև 2012թ. դեկտեմբերի 31-ը դիմում են ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու համար:

Ավելին, ՀՀ կառավարության 23.11.2007թ. <ՀՀ քաղաքացիություն ստանալու, ինչպես նաև ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանք ներկայացնելու կարգը սահմանելու մասին> թիվ 1390-Ն և 25.12.1998թ. <ՀՀ-ում անձնագրային համակարգի կանոնադրությունը և ՀՀ քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին> թիվ 821 որոշումներով ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու համար ՀՀ քաղաքացիները ներկայացնում են սահմանված ձևի դիմում, այս պահանջները պետք է պահպանել ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու գործընթացում:

Մակայն փախստականներից ծնված և արդեն իսկ նրանց 18 տարին լրացած մի խումբ երիտասարդներ երբևէ չեն դիմել և չեն ցանկանում դիմել ՀՀ քաղաքացիություն և ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու համար: Ոմանց ձեռքին մինչև օրս գտնվում են ՀՀ միգրացիոն պետական ծառայության /նախկին ՀՀ ԿԱ միգրացիայի և փախստականների վարչության/ կողմից տրված փախստականի ընտանեկան կամ ՀՀ ոստիկանության անձնագրային բաժինների կողմից տրված փախստականի կարգավիճակի հին նմուշի վկայականները, կամ օրինական ուժի մեջ մտած վճիռներ, որոնց հիման վրա անվավեր են ճանաչվել նրանց փախստականի կարգավիճակը:

Հարկ ենք համարում նշել նաև, որ որևէ պետության քաղաքացիություն ձեռք բերելը, փոխելը, հրաժարվելը մարդու համար իրավունք են, այլ ոչ թե պարտավորություն: Այս նորմն ամրագրված է <ՀՀ քաղաքացիության մասին> ՀՀ օրենքի 1-ին հոդ. 2-րդ մասում, որն էլ համահունչ է և բխում է ՀՀ սահմանադրության 30.1 հոդ. պահանջից, հետևաբար, ոչ ոք, այդ թվում նաև պետությունն իրավունք չունի անձին ստիպելու ձեռք բերել այս կամ այլ պետության քաղաքացիությունը և հարկադիր կերպով նրան պահել քաղաքացիության մեջ: ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Ուշագրավ է նաև փախստականներին զինվորական ծառայության գորակոչելու հետ կապված որոշ զինկոմիսարիատների դիրքորոշումը: Ուժը կորցրած ճանաչված <Փախստականների մասին> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի և <Զինապարտության մասին> ՀՀ գործող օրենքի համաձայն՝ ծառայությունը զինված ուժերում փախստականի համար հանդիսանում է իրավունք, այլ ոչ թե պարտականություն: Այնուամենայնիվ, երբեմն փորձեր էին արվում նշված անձանց հարկադրաբար զինվորական ծառայության գորակոչելու ուղղությամբ՝ նշյալ օրենքների պահանջներին յուրօրինակ մեկնաբանություն տալով: Իսկ ներկայիս <Փախստականների և ապաստանի մասին> ՀՀ օրենքում փախստականների զինվորական ծառայության անցնելու իրավունքի վերաբերյալ նշում անգամ չկա: Ինչը հնարավորություն է տալիս ՀՀ պետական լիազոր մարմիններին յուրովի մեկնաբանել գործող <Փախստականների և ապաստանի մասին> ՀՀ օրենքի դրույթները:

Մեր հանրապետությունում ՀՀ օրենքներն ու միջազգային պայմանագրերի պահանջները ՀՀ-ում զուգահեռաբար չեն գործում, հանրապետությունում ձևավորվել է մի պրակտիկա, որոնք հակասում են թե՛ միջազգային, թե՛ ազգային իրավական նորմերին, բայց և պատկան մարմինների կողմից էլ քայլեր չեն ձեռնարկվում վերացնելու ձևավորված այդ հակասություններով լի պրակտիկան:

ՀՀ միգրացիոն պետական ծառայությունը ՀՀ զինվորական կոմիսարիատների հարցումներին տալիս է իրավաբանորեն չհիմնավորված պատասխաններ, օրինակ բոլոր արական սեռի փախստականների գործերով՝ տրամադրում է միևնույն պատասխանը. <Անձը որպես փախստական հաշվառված չէ, քանի որ ծնվել է ՀՀ-ում և նրա մշտական

բնակության վայրի պետությունը Հայաստանի Հանրապետությունն է>: Այս պատասխանը տրվում է նաև այն երիտասարդներին, ովքեր, մինչև իրենց 16 տարին լրանալը, նույն ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության /նախկինում ՀՀ ԿԱ փախստականների և միգրացիայի վարչության/ կողմից հաշվառված են եղել փախստականներ և ՀՀ ոստիկանության անձնագրային բաժինների կողմից ստացել են փախստականի կարգավիճակի վերաբերյալ վկայականներ:

Ավելորդ չենք համարում մեկ անգամ ևս նշել, որ քաղաքացիության ընդունմանը հատուկ է կամավորության և բոլորի համար բաց լինելու սկզբունքը: Կամավորության սկզբունքի էությունը պայմանավորված է նրանով, որ քաղաքացիություն ձեռք բերելը միջազգային-իրավական փաստաթղթերով համարվում է մարդու իրավունքը:

Գործնականում ՀՀ-ում բազմաթիվ են այն դեպքերը, երբ պետական որոշ պաշտոնատար անձինք ՀՀ գործող օրենսդրությամբ, միջազգային պայմանագրերով, որոնք վավերացվել են ՀՀ կողմից, սահմանված իրավական նորմերը դիտարկում և կիրառում են մարդու քաղաքացիության ընդունման իրավունքի /կամքի արտահայտման սկզբունքի/ խախտմամբ, այսինքն ճիշտ չեն մեկնաբանում օրենքը և փաստացի ոտնահարում են մարդու քաղաքացիությունն ընդունելու իրավունքը, մինևույն ժամանակ խոչընդոտելով այդ անձանց ազատ կամքի արտահայտման իրավունքի իրականացմանը: Վերջիններիս կամայականության պատճառով մի խումբ անձինք <պատանդի> կարգավիճակ են ձեռք բերել Հայաստանում, ինչի արդյունքում խախտվում են նրանց ՀՀ սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքներն ու ազատությունները:

Ուժը կորցրած ճանաչված <Փախստականների մասին> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով /փոփ. 03.03.2004թ.ՀՕ-49-Ն/ ամրագրված էր, որ 1988-1992թթ. Ադրբեջանից ՀՀ բռնագաղթած և փախստականների հարցերով զբաղվող պետական մարմնում որպես փախստական հաշվառված անձինք հանդիսանում են փախստական՝ սույն օրենքի իմաստով: Իսկ մինչ այդ փոփոխությունը՝ նույն հոդվածը ամրագրված է եղել /27.03.1999թ. ՀՕ-288/ հետևյալ կերպ. <Սույն օրենքի այն նորմերը, որոնք սահմանափակում են փախստականի կարգավիճակ հայցողների իրավունքները, չեն տարածվում 1988-1992թթ. ՀՀ բռնագաղթված անձանց վրա:>:

Օրինակ. 1988-1992թթ. ՀՀ տարածքում ծնված երեխաների ծննդյան պահին և փախստականի վկայական տալու ժամանակ, նրանց ծնողները հաշվառված են եղել փախստական և ունեցել են փախստականի կարգավիճակի վկայականներ, իսկ մինչև նրանց 18 տարին լրանալը ՀՀ քաղաքացիություն ընդունել է միայն նրանց ծնողներից մեկը և <ՀՀ քաղաքացիության մասին> օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի համաձայն բացակայում է ՀՀ քաղաքացիություն ընդունած ծնողի համաձայնությունը, ինչպես նաև այդ երեխաները /<ՀՀ քաղաքացիության մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի, 10-րդ հոդ. 2-րդ մասի համաձայն չեն դիմել ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու համար, հետևաբար այդ երեխաները շարունակում են մնալ կամ փախստական, կամ քաղաքացիություն չունեցող անձինք:

<ՀՀ քաղաքացիության մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդ. համաձայն. <Օտարերկրյա քաղաքացի է համարվում ՀՀ քաղաքացիություն չունեցող այն անձը, որն ունի այլ պետության քաղաքացիություն:

ՀՀ-ում բնակվող ՀՀ քաղաքացիություն չունեցող անձը, որն այլ պետության քաղաքացիություն ունենալու ապացույց չունի, համարվում է քաղաքացիություն չունեցող անձ:

ՀՀ-ը խրախուսում է ՀՀ-ում բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց կողմից ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելը եւ չի խոչնդոտում նրանց կողմից այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելուն:

Օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց իրավական վիճակը ՀՀ-ում կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ եւ ՀՀ միջազգային պայմանագրերով:»:

Սույն օրենքի 8-րդ հոդ. 2-րդ մասի կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը 02.03.2006թ. ընդունել է <ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման կարգը և կացության վկայականի նկարագիրը հաստատելու մասին> թիվ 318-Ն որոշումը: Սակայն սույն որոշման պահանջները բացարձակ չեն կիրառվում դեռևս ՀՀ քաղաքացիություն ձեռք չբերած անձանց նկատմամբ, մասնավորապես 1988-1992թթ. Ադրբեջանից Հայաստան բնագաղթած անձանցից ծնված այն երիտասարդների, որոնց քաղաքացիությունը պարզել հնարավոր չէ:

<Փախստականների և ապաստանի մասին> ՀՀ օրենքի 64-րդ հոդ. 1-ին մասով սահմանված է, որ. <1. 1988-1992թթ. Ադրբեջանի Հանրապետությունից ՀՀ բնագաղթած անձինք, ինչպես նաև նրանք, ովքեր ՀՀ-ում ստացել են ժամանակավոր ապաստան, ՀՀ-ում ճանաչվում են փախստականներ եւ ապաստան ստացածներ, եթե նրանք մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը /ուժի մեջ է մտել 24.01.2009թ./ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել են եւ ունեն համապատասխանաբար փախստականի եւ ժամանակավոր ապաստանի վավեր վկայական, եւ նրանց որպես փախստական ճանաչելը, ինչպես նաև ժամանակավոր ապաստանի իրավունքը մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը /ուժի մեջ է մտել 24.01.2009թ./ սահմանված կարգով չի դադարեցվել: Նշված անձինք սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու տարվա ընթացքում, պետք է դիմեն Ոստիկանությանը փախստականի եւ ժամանակավոր ապաստանի վկայականը սույն օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի հետ փոխանակելու համար:

<ՀՀ քաղաքացիության մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդ. սահմանում է, որ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած ծնողների մինչև 14 տարեկան երեխան է այդ դեպքում ձեռք բերում ՀՀ քաղաքացիություն, իսկ եթե ՀՀ քաղաքացիություն է ձեռք բերում ծնողներից մեկը, իսկ մյուսն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա նրանց մինչև 14 տարեկան երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, եթե առկա է ծնողների համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է ՀՀ-ում, և առկա է ՀՀ քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը: Սույն դեպքում խիստ անհրաժեշտ է ՀՀ քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

Պարզ է, որ եթե մինչև 14 տարեկան փախստական երեխայի երկու ծնողները ձեռք են բերում ՀՀ քաղաքացիություն, ապա այդ հետևանքով մինչև 14 տարեկան երեխան կորցնում է փախստականի կարգավիճակը և <ՀՀ քաղաքացիության մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ուժով նա ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, բայց 14-18 տարեկան երեխայի ծնողների կողմից քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում այդ տարիքի երեխայի իրավական կարգավիճակը <ՀՀ քաղաքացիության մասին> ՀՀ օրենքով չի կարգավորվում: Օրենքի 22-րդ հոդվածում ամրագրված է միայն 14-18 տարեկան երեխաների համաձայնության անհրաժեշտությունը՝ ծնողների քաղաքացիությունը փոխվելու դեպքում: Ինչպես հայտնի է փախստականի կարգավիճակից անցումը ՀՀ քաղաքացիությանը, դա հպատակագրման գործընթաց է, այլ ոչ թե քաղաքացիության փոփոխման: ՀՀ քաղաքացիություն ընդունելու դեպքում էլ անհրաժեշտ է փախստականի

կարգավիճակ ունեցող չափահաս անձի, իսկ անչափահասի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի ցանկությունն ու համաձայնությունը:

Այսպիսով, ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունն իր նախաձեռնությամբ մի խումբ երիտասարդների, ում 18 տարին վաղուց լրացել է և արդեն 23-24 տարեկան անձինք են, համատարած հարուցում է վարչական վարույթներ՝ նրանց փախստականի կարգավիճակը դադարեցնելու և փախստականի վկայականն ու ճամփորդական փաստաթուղթն անվավեր ճանաչելու մասին: Իր կողմից իրականացված վարչական վարույթներին բացարձակ մասնակից չի դարձնում այդ երիտասարդներին և կայացված որոշումներն էլ պատշաճ կարգով ու ժամկետում չի ուղարկում նրանց, միայն գրավոր նամակով տեղեկացնում է, որ դադարեցվել է իրենց փախստականի կարգավիճակը, մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ միգրացիոն պետական ծառայություն՝ փախստականների հարցերի բաժին: Հարկ ենք համարում նշել, որ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ: ՀՀ միգրացիոն պետական ծառայությունը գրկել է որոշակի խմբի փախստականներից ծնված արական սեռի երիտասարդներին նույնիսկ վարչական վարույթում անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով մասնակցելու և հանդես գալու, ապացույցներ ներկայացնելու իրավունքից:

3. ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ և ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1. Աղքատության վերացման իրավունքներ՝ բավարար բնակարանային պայմաններ և հարկադիր վտարման վերացման իրավունքներ

Պատշաճ բնակարան ունենալու իրավունքը բացահայտ ճանաչում է ստացել մի շարք միջազգային փաստաթղթերում, այդ թվում՝

- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում /25-րդ հոդ. 1-ին կետ/,
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում /11-րդ հոդ. 1-ին կետ/,
- Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայում /5-րդ հոդ. e կետի (iii) ենթակետ/,
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում /27-րդ հոդ./,
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում /14-րդ հոդ. 2-րդ կետ/,
- Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայում /21-րդ հոդ./:
- Մարդու իրավունքների տարածաշրջանային համակարգերում, որպես բնակարանային իրավունքների մասին կարևոր իրավական աղբյուր, աչքի է ընկնում Եվրոպական սոցիալական խարտիան /31-րդ հոդ./:

Մրանք այն միջազգային պայմանագրերն են, որոնք վավերացվել են ՀՀ կողմից:

Թեև բնակարանի իրավունքը բացակայում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայում, սակայն բնակարանի իրավունքին առնչվող հարցեր բարձրացվել են նաև Մարդու

իրավունքների եվրոպական դատարանի կողմից, օրինակ ՄԻԵԿ-ի 8-րդ հոդ.
/մասնավոր և ընտանեկան կյանքի իրավունքը/ և թիվ 1 արձանագրության հղումով:

<Գուձարդին ընդդեմ Իտալիայի> գործով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշմամբ Եվրոպական դատարանը գտել է, որ չնայած Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայում բնակարան տրամադրելու մասին որևէ պարտավորություն չի նախատեսվում, բայց այնուամենայնիվ պետական մարմինները պարտավորություն են կրում ապահովելու, որ անձին կամ ընտանիքին չպարտադրվեն ապրելու անտանելի կենսապայմաններում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման հիմնական միտքն այս առումով այն է, որ յուրաքանչյուր ոք պետք է ի վիճակի լինի, առանց ամոթի և ոչ ողջամիտ արգելքների, լիիրավ բնակվելու իր տանը, մասնակցելու այլ մարդկանց հետ սովորական, առօրյա շփմանը: Ի թիվս այլ հանգամանքների, սա նշանակում է, որ մարդիկ պետք է ի վիճակի լինեն արժանապատիվ պայմաններում հոգալու իրենց տարրական կարիքները, ոչ ոք չպետք է ապրի այնպիսի պայմաններում, որտեղ իր կարիքները հոգալու միակ եղանակը նվաստանալը կամ տարրական ազատություններից զրկվելն է>: Այսպիսով, պատշաճ բնակարանի իրավունքը, որպես մարդու հիմնարար իրավունք, անհրաժեշտ է ընտանիքների բարօրության և կայունության համար, որը ՀՀ-ում շատ հաճախ խախտվում է:

Այսպիսով, մեր հանրապետությունում միևնույն փաստական հանգամանքների նկատմամբ գործում են ՀՀ կառավարության տարբեր որոշումներ: Օրինակ՝ սեփականատիրոջը, վարձակալին, փախստականին¹, ինչպես նաև հանրակացարանային շենքերում փաստացի հաշվառում ունեցող ընտանիքներին² հատկացվում են բնակարաններ՝ հաշվի առնելով նրանց ունեցած բնակարանի սենյակների և անձանց թիվը, իսկ վթարային շենքերում փաստացի հաշվառում ունեցող ընտանիքներին՝ մեկ սենյակ պակաս: Սա բացահայտ խտրական մոտեցում է և դուրս է թե ներպետական, թե միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված մարդու իրավունքների ու ազատությունների սկզբունքներից: ՀՀ կառավարությունն արհեստականորեն ստեղծում է սոցիալական ճգնաժամ, անհավասար մոտեցում ցուցաբերում միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, մասնավորապես կարիքավոր քաղաքացիներին բնակարաններով ապահովելու հարցում:

Այնուամենայնիվ, ՀՀ սահմանադրության 34-րդ հոդվածում ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ

¹ Փախստականները, որոնք նույնպես իրենց անձնագրերում ունեն <փաստացի բնակվում է> գրառումը, համարվում են փաստացի բնակվող բնակիչներ, նրանց համար հասանելիք բնակարանի սենյակների թիվը որոշվում է ընտանիքի անդամների թվին համապատասխան, ինչպես նաև թույլ է տրվում նրանց սեփականաշնորհել իրենց հատկացված բնակարանները՝ <Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին> ՀՀ օրենքով սահմանված կարգով: Իսկ սույն կարգի 3-րդ կետի <դ> ենթակետում նշված վթարային բնակարաններում՝ նախկին գործադիր մարմինների, Երեւանի քաղաքապետի, Երեւանի թաղային համայնքների ղեկավարների որոշումների կամ դատարանի՝ սահմանված կարգով ուժի մեջ մտած վճիռների հիման վրա բնակվող, ինչպես նաև մինչև 12.10.2006թ. այդ բնակարաններում անձնագրային հաշվառում ունեցող եւ փաստացի բնակվող բնակիչներին ՀՀ Կառավարության նշյալ որոշմամբ թույլ չի տրվում նույնիսկ մասնավորեցնել իրենց հատկացվող բնակարանները, Երևանի քաղաքապետի որոշումների հիման վրա նշված քաղաքացիների հետ կնքվում է միայն վարձակալության պայմանագրեր:

² Նույնպես ունեն <փաստացի բնակվում է> գրառումը:

թվում բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար:

Մեր իրավապաշտպան գործունեության ընթացքում առանձնակի ուշադրություն ենք դարձնում նաև ՀՀ-ում վթարային, կիսապանելային, հանրակացարանային շենքերում բնակվող բնակիչներին արտահերթ բնակարաններ հատկացնելու և այդ ընտանիքներին արդեն իսկ հատկացված բնակարանների պայմանները բարելավելու հիմնախնդիրների լուծման գործընթացին: Բնակիչների մեծ մասը դեռևս շարունակում է բնակվել 4-րդ կարգի վթարայնություն ունեցող և քանդման ենթակա շենքերում, և նրանց բնակարաններով ապահովելու ստույգ ժամանակացույց դեռևս գոյություն չունի: Նախորդ տարիներին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին այդպիսի շենքերում բնակվող բնակիչների մեծ մասն ապահովվել են բնակարաններով, սակայն բնակարաններ հատկացնելիս պատկան մարմինների կողմից հաշվի չեն առնվել նրանց ընտանիքների անդամների թիվը և 9 տարեկանից բարձ տարասեռ անձանց առկայությունը, չէ՞ որ գործնականում անհնար է բազմանդամ ընտանիքին տեղավորել մեկ սենյականոց բնակարանում: Ըստ իս, սա չի կարող դիտվել պետության կողմից իրականացվող բնակարանի ապահովման և բարելավման ծրագիր: Ինչպես կարելի է մի կողմից հատկացնել բնակարան, իսկ մյուս կողմից խախտել միջազգային պայմանագրերով և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված մարդու և նրա ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունքը, չէ՞ որ պետությունն անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկի յուրաքանչյուր ոքի այս իրավունքի իրականացման համար:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների այս իրավունքի խախտումներին նպաստող հիմնական դրդապատճառները մեր հանրապետությունում շարունակում են մնալ.

✓ որոշ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից իրենց գործունեության ընթացքում թույլ տրված անգործությունը, մասնագիտական ցածր պատրաստվածությունն ու անիրազեկությունը, ինչպես նաև նրանց կամայականությունը՝ իրավական ակտերի պահանջները կիրառելիս,

✓ պատասխանատվության զգացումի բացակայությունը, անպատժելիության մթնոլորտը, նրանց նկատմամբ փաստացի անվերահսկելիությունն ու թողտվությունը բոլոր առումներով,

✓ որոշ օրենքների և նորատիվ ակտերի անհամապատասխանությունն ու հակասությունը ՀՀ սահմանադրության և միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին,

✓ որոշ իրավական ակտեր ոչ ժամանակին ընդունելը, որոնք կնպաստեն բնակչության սոցիալ-կենցաղային, բնակարանային և այլ հիմնախնդիրների կարգավորմանն ուղղված պետական ծրագրերի սահմանված ժամկետներում իրականացնելուն,

✓ իրավական ակտի դրույթների ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալումը, իրավական ակտն ավելի բարձր կամ նույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտին կամ նույն իրավական ակտի տարբեր դրույթներին հակասող կամ միմյանց չհամապատասխանող իրավական ակտեր ընդունելն ու կիրառելը,

✓ որոշ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ պատշաճ հսկողության բացակայությունը և/կամ <հովանավորչությունը>, մասնավորապես Երևանի

օտարման գոտիների ձեռք բերող ընկերությունների և անհատ ձեռներեցների /կառուցապատողների/ շահերի գերակայությունը, որն ավելի բարձր է դասվում, քան սեփականատերերի և գույքային իրավունքներ ունեցող քաղաքացիների իրավունքներն ու շահերը:

Ա) Դեռևս Խորհրդային Միության ժամանակահատվածում շինարարությունը սկսած, սակայն անավարտ մնացած բնակելի շենքերի բնակարաններին ամրակցում ունեցող քաղաքացիների բնակարաններով ապահովվելու հիմնախնդիրը

ՀՀ կառավարությունը պարտավորություն ունի մի քանի տասնյակ քաղաքացիների հանդեպ, որոնց բնակարանները օտարվել և քանդվել են 90-ական թթ., և որոնց առ այսօր այլ բնակարան կամ համապատասխան փոխհատուցում չի տրվել: Կիսակառույցները, որոնցից նման քաղաքացիները պետք է ստանան բնակարան, այդպես էլ չեն ստացել: Այնինչ ՀՀ իշխանությունները նախևառաջ պետք է լուծեն այս խմբի քաղաքացիների բնակարանով ապահովվելու հարցը, քանի որ նրանք դարձել են բնակարանագուրկ պետական մարմնի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու հետևանքով:

ՀՀ-ում դեռևս լուծված չեն բնակաշինարարական կոռուպտիվների միջոցներով սկսված և ապա ռուբլու արժեզրկման հետևանքով այդպես էլ ավարտին չհասցված բնակարաններին վերաբերող խնդիրները: Այստեղ նույնպես բնակարանների սպասողների թիվը հարյուրների է հասնում: Դեռևս Խորհրդային Միության ժամանակահատվածում շինարարությունը սկսած, սակայն անավարտ մնացած բնակելի շենքերի բնակարաններին ամրակցում ունեցող քաղաքացիների բնակարաններով ապահովվելու հարցն իր իրավական լուծումը դեռևս չի ստացել: Այդ քաղաքացիները փաստացի ձեռք են բերել անօթևանի կարգավիճակ: Քաղաքացիներին ամրակցված անավարտ շինարարության բազմաբնակարան բնակելի շենքերից հատկացված բնակարանների փոխարեն մեկ այլ բնակարանի հատկացման կամ դրամական փոխհատուցման տրամադրման հայեցակարգ կամ ծրագիր ՀՀ կառավարության կողմից ավելի քան 20 տարի չի ընդունվել:

ՀՀ քաղաքաշինության նախարարությունից հայտնել են, որ ՀՀ տարեկան պետական բյուջեների ձևավորման հիմքում դրված է ծրագրային մոտեցումը, ներկայումս իրականացման փուլում գտնվող պետական աջակցության նպատակային ծրագրերի շրջանակներում առաջնահերթ կարգով լուծվում են բնական և տեխնաժին աղետների հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրները: Ինչ վերաբերում է վերոնշյալ հարցին, ապա դրան հնարավոր է անդրադառնալ հետագա տարիներին՝ հանրապետությունում առկա նմանատիպ մոտ 1900 /Երևան քաղաքում 90/ շենքերի բնակարաններին ամրակցում ունեցող անձանց բնակարանային խնդիրների քննարկման ժամանակ՝ այդ ուղղությամբ ՀՀ տարեկան պետական բյուջեներով միջոցներ նախատեսելու դեպքում:

Իհարկե դժվար է համաձայնվել ՀՀ քաղաքաշինության նախարարության այս պատասխանի հետ, քանի որ նշված պատճառաբանությունն ունի ընդամենը ընթացակարգային, բայց ոչ բովանդակային նշանակություն և չի կարող դրվել անօթևան և բնակարանի խիստ կարիք ունեցող ընտանիքներին առաջնահերթ բնակարանով ապահովելու և/կամ բնակարան հատկացնելու հարցը վերանայելու և դիմումները մերժելու հիմքերում: Նման բովանդակության պատասխանները դասական ֆորմալ բյուրոկրատական ձևաչափ է, որով անօթևանի կարգավիճակում գտնվող անձանց արդեն

երկու տասնամյակ է հստակ կամ ստույգ պատասխան չի տրվում՝ ե՞րբ և ո՞ւմ կողմից նրանք պետք է ի վերջո հաշվառվեն և բնակարաններով ապահովվեն:

Բ) Աղետի գոտու անօթևաններին բնակարաններով ապահովվելու հիմնախնդիրը

1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժից հետո անցել է արդեն 23 տարի, սակայն <աղետի գոտի> է շարունակում մնալ աղետից տուժած մի քանի քաղաքներ, որտեղ առաջնային հիմնախնդիր շարունակում է համարվել հազարավոր անօթևանների առկայությունն ու նրանց բնակարաններով ապահովելը:

ՀՀ իշխանությունների հավաստիացումներով և համաձայն <Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման հայեցակարգի> աղետու գոտու անօթևան ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման վերջնաժամկետը 2013թ. է (ՀՀ վարչապետի 08.12.2008թ. որոշմամբ հաստատված):

2009-2011թթ., ՀՀ կառավարության և <Գլենդեյլ Հիլզ> կազմակերպության միջև կնքված պայմանագրի համաձայն, ՀՀ պետական բյուջեի միջոցներով միայն Գյումրիում կառուցվելու են 3030 բնակարան և սպասարկման օբյեկտների տարածքներ: ՀՀ քաղաքաշինության նախարարի 04.03.2009թ. թիվ 21 հրամանով ստեղծվել է բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման և բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում բնակարան (բնակելի տուն) գնելու համար աջակցության տրամադրման և բնակարանների (բնակելի տների) հատկացման հանձնաժողով:

2009թ. դեկտեմբերին ՀՀ Լոռու եւ Շիրակի մարզ կատարած աշխատանքային այցի ընթացքում ՀՀ նախագահը, ծանոթանալով 1988-ի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանների կառուցման ծրագրի ընթացքին, դժգոհել է Գյումրիի «Մուշ-2» թաղամասում կատարված շինարարության որակից եւ չնախատեսված խորհրդակցություն անցկացրել Շիրակի մարզպետարանում, որին մասնակցել են ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարը, քաղաքաշինության նախարարը, Շիրակի մարզպետը, Գյումրիի քաղաքապետը, կառուցապատող «Գլենդեյլ Հիլզ» ընկերության ղեկավարները: Մեկ ժամ տևած դռնփակ խորհրդակցությունից հետո նախագահի մամլո խոսնակը լրագրողներին որոշ մանրամասներ է հաղորդել, որ ՀՀ նախագահին ասել է, որ շենքերի ներքին հարդարման աշխատանքներում նկատելի են զգալի թերություններ, ինչն ուղղակի անթույլատրելի է: Շեշտելով, որ նախատեսված շինարարական աշխատանքներն ամբողջ ծավալով իրականացնելու հետ մեկտեղ չպետք է տուժի որակը՝ կարգադրել է ամբողջությամբ վերացնել եղած թերությունները: Նա նշել է նաև, որ պետք է լուծվեն բոլոր բնակարանների ջեռուցման, գազիֆիկացման, սալիկապատման և սալօջախների տեղադրման հարցերը: «Մարդկանց նվազագույն բոլոր պայմանները պետք է ապահովվեն, եւ բնակարանները պետք է հարմարավետ լինեն ապրելու համար: Իսկ եղած բացթողումների հետ կապված՝ կառուցապատող ընկերությունը եւ համապատասխան պետական գերատեսչությունները պետք է հետևություններ անեն», - ընդգծել է ՀՀ նախագահը: Նա հանձնարարել է նաեւ լուծել տարածքի բարեկարգման, կանաչապատման, ենթակառուցվածքների ապահովման հետ կապված խնդիրները:

19.12.2009թ. Գյումրիում վիճակահանություն էր անցկացվել, որի արդյունքում որոշվել էր այն 96 ընտանիքները, ովքեր ՀՀ նախագահի այցի օրը պետք է «Գլենդեյլ Հիլզ»-ի

կառուցած շենքերում բնակարանամուտ տոնեին: Անձամբ ՀՀ նախագահի կողմից բացահայտված թերությունների եւ տված հանձնարարականների արդյունքում, փաստորեն, այդ ընտանիքները բնակարան չստացան: Փոխարենը նրանց բնակարանների ստացման մասին հավաստագրեր հանձնվեցին:

ՀՀ կառավարության տվյալներով, մինչ օրս երկրաշարժի գոտում անօթեւան է 7.000 ընտանիք: Կառավարությունը խոստացել է մինչեւ 2013թ. լուծել շուրջ 5.300 ընտանիքի բնակարանի խնդիրը: Գյումրիում ՀՀ կառավարությունը նախատեսում է ֆինանսավորել ավելի քան 3.000 բնակարանների շինարարությունը: Շինարարական աշխատանքները կատարող «Գլենդել Հիլզ» ընկերությունն ավելի վաղ խոստացել էր ընթացիկ տարվա նոյեմբեր ամսին ավարտին հասցնել 1056 բնակարանների շինարարությունը, սակայն աշխատանքների ավարտը ստիպված եղան հետաձգել մինչեւ դեկտեմբերի վերջ: Այժմ արդեն նոր ժամկետ է նշանակվել. ՀՀ քաղաքաշինության նախարարության եւ կառուցապատող «Գլենդել Հիլզ» ընկերության ղեկավարները խոստացել են, որ նշված աշխատանքները լիովին կավարտվեն եւ շենքերը բնակության համար պատրաստ կլինեն հաջորդ տարվա մայիսի կեսին (www.azatutyun.am, 23.12.2009թ.):

Գյումրի 1988թ. երկրաշարժից հետո անօթեւան մնացած ընտանիքների համար բնակարանների կառուցման ծրագրի շրջանակներում, որը միայն իրականացնում է «Գլենդել Հիլզ» ընկերությունը, 2010թ. հուլիսին Գյումրիի Մուշ-2 թաղամասում հանդիսավորությամբ շահագործման հանձնվել են 1056 նոր բնակարաններ (www.azatutyun.am, 09.07.2010թ.):

ՀՀ նախագահը 24.03.2011թ. կրկին այցելել է Գյումրի եւ ծանոթացել «Մուշ-2» թաղամասում պետական միջոցներով իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի ընթացքին, որը նախկինում նրա խիստ քննադատությանն էր արժանացել: Նույնիսկ շենքերից մեկում տեղի էր ունեցել փլուզում, իսկ պատկան կառույցները ստացել են շուրջ 80 դիմում-բողոքներ: Գյումրիի «Մուշ-2» եւ «Անի» թաղամասերում այժմ իրականացվող բնակարանաշինական պետական ծրագրի երկրորդ փուլում նախատեսվում է կառուցել 1756 բնակարան: Բնակարանաշինական ծրագիրն իրականացնող շինարարական ընկերությունը՝ «Գլենդել Հիլզ»-ը, այս անգամ որպես նմուշ ավարտին էր հասցրել ընդամենը երկու բնակարանի ներքին հարդարման աշխատանքները, որպեսզի ՀՀ նախագահը հավանություն տար ու մնացած բնակարանները այդ սկզբունքով կառուցվեն: «Գլենդել Հիլզ»-ի գործադիր տնօրենը «Ազատություն» ռադիոկայանին հայտնել է, որ բնակարանաշինության ծրագրի երկրորդ փուլը նախատեսված է ավարտին հասցնել 2011թ. սեպտեմբերին (www.azatutyun.am, 24.03.2011թ.):

Այս կապակցությամբ, պետք է նշենք, հետաքրքիր է, թե այսպիսի լայնածավալ բնակարանային շինարարություն իրականացնելու համար ՀՀ կառավարությունն ինչու է վստահել միայն մեկ կազմակերպությանը, ինչու՞ չի իրականացրել բաց և թափանցիկ մրցույթ և հնարավորություն տվել այլ կազմակերպությունների ևս մասնակցել Գյումրի քաղաքի վերականգնման աշխատանքներին: Ի դեպ, «Գլենդել Հիլզ» ընկերության «ղեկավար» հանդես է գալիս ՀՀ նախագահի եղբայրը, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ս. Սարգսյանը:

Գ) Երևան քաղաքի չորրորդ կարգի վթարայնություն ունեցող և քանդման ենթակա բնակելի շենքերի բնակիչներին նոր բնակարաններով ապահովվելու հիմնախնդիրները

Դեռևս 20.03.2008թ. ՀՀ կառավարությունն ընդունել է 25.10.2000թ. <ՀՀ տարածքում /բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի/ քանդման ենթակա բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին> իր թիվ 682 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին թիվ 294-Ն որոշումը: Նշյալ որոշման միջոցով ՀՀ կառավարությունը կարգավորել է ՀՀ ողջ տարածքում գտնվող վթարային շենքերում բնակվող անձանց, այդ թվում նաև անձնագրային հաշվառում ունեցող և փաստացի բնակվող բազմաթիվ ընտանիքների վերաբնակեցման՝ բնակարանային պայմանների բարելավման խնդիրները, թույլ տալով նաև այդ բնակիչներին խուսափել անօթևանի կարգավիճակից: Սա մեծ սոցիալական նվաճում է մեր հանրապետության համար:

Բայց, դրա հետ մեկտեղ, պետք է նշենք, որ համաձայն այդ ընդունված որոշմամբ հաստատված կարգի, վթարային շենքում փաստացի բնակվող ընտանիքներին Երևանի քաղաքապետարանի որոշումներով հատկացվել են նախկինում զբաղեցրած բնակարանի չափից մեկ սենյակ (1-սենյականոց բնակարանի դեպքում՝ 1-սենյականոց բնակարան) պակաս, և հաշվի չեն առնվել բազմանդամ ընտանիքների և 9 տարեկանից բարձր անձանց առկայությունը, որը պահանջվում է հենց այդ որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ մասով: Չնայած, Երևանի քաղաքապետարանի որոշումներն ընդունվել են ՀՀ կառավարության որոշման սխալ մեկնաբանման և կիրառման արդյունքում, քանի որ ՀՀ կառավարության 25.10.2000թ. թիվ 682 որոշման մեջ կատարված փոփոխություններն ու լրացումներն այնպես են շարադրված կամ ձևակերպված, որոնք տարաբնույթ ընկալումների տեղիք են տալիս, իսկ տարբեր պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններն ու դատարանները՝ տարբեր ձև են մեկնաբանում և կիրառում:

Օրինակ. ՀՀ վճռաբեկ դատարանը, որը կոչված է ապահովել ՀՀ-ում օրենքի և իրավական ակտերի միատեսակ կիրառում, միևնույն բնույթի գործերով կայացրել է տարբեր որոշումներ՝ ցուցաբերելով տարբերակման մոտեցում միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ: 01.07.2009թ. Սուսան Մելոյանի թիվ ՎԴ/5380/05/08 քաղ. գործով որոշում է կայացրել, որով ապացուցված է համարել, որ Երևանի քաղաքապետարանը սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ կառավարության 25.10.2000թ. թիվ 682 որոշման պահանջները, իրավացիորեն հայցը բավարարել է, իսկ 25.06.2001թ. Գայանե Զաքարյանի թիվ ՎԴ /0249/05/09 քաղ. գործով որոշում է կայացրել, որ Երևանի քաղաքապետարանը ճիշտ է մեկնաբանել և կիրառել վերը նշված որոշման պահանջները և մերժել քաղաքացի Գ. Զաքարյանի օրինական և արդարացի պահանջը:

Այնուամենայնիվ, ՀՀ կառավարությունը, հավանաբար Երևանի Սիսակյան 22 վթարային շենքում բնակվող բնակիչների բազմաթիվ բողոքներից ելնելով, 05.02.2009թ. ընդունել է <Երևան քաղաքի քանդման ենթակա վթարային հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչներին բնակարաններ հատկացնելու կարգը հաստատելու մասին> թիվ 172-Ն որոշումը, որով ավելի հստակեցրել է բնակարան հատկացնելու կարգն ու հիմքերը, համաձայն որի հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչները բնակարաններով կապահովվեն նախկինում զբաղեցրած բնակարանի սենյակների թվին համապատասխան, բայց ոչ ավելի, քան նրանց ընտանիքներին (անձերի թվով): Բացի այդ, նշված անձանց բնակարանները հանձնվելու են սեփականության իրավունքով: Ի դեպ, այս իրավունքը սահմանափակված է ՀՀ կառավարության 25.10.2000թ. թիվ 682 որոշմամբ սահմանված կարգով քանդման ենթակա վթարային շենքի փաստացի բնակվող անձանց համար:

Այսպիսով, <Փաստացի բնակվում է> գրառում ունեցող ընտանիքներին հատկացվում են բնակարաններ՝ հաշվի առնելով նրա ունեցած բնակարանի սենյակների թիվը, այն էլ մեկ սենյակ պակաս, որն էլ դուրս է թե ներպետական, թե միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված սկզբունքներից:

Հարկ է նկատել, որ ՀՀ կառավարությունը 07.03.2007թ. <ՀՀ Պաշտպանության նախարարության համակարգի զինճառայողների բնակարանային ապահովության մասին> թիվ 384-Ն որոշմամբ հաստատված կարգով զինճառայողներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվող բնակելի սենյակների թիվը որոշում է ելնելով նրանց ընտանիքի անդամների թվից: Բնակելի տարածության չափը որոշելիս՝ հաշվի է առնվում նաև ընտանիքի անդամ համարվող կնոջ 20 շաբաթական հղիությունը:

ՀՀ կառավարության 25.10.2000թ. թիվ 682 որոշման մեջ 20.03.2008թ. թիվ 294-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների ու լրացումների հիմքում պետք է դրված լինեք ՀՀ կողմից վավերացված Եվրոպական սոցիալական խարտիայի³ 31-րդ հոդ.⁴, ՀՀ սահմանադրության 34-րդ հոդ. և այլ սոցիալական ոլորտի իրավական ակտերի պահանջները, ապահովելով՝ դրանցով երաշխավորված յուրաքանչյուր ոքի բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունքը:

Չնայած, մեր կողմից բազմաթիվ առաջարկներ են ներկայացվել ՀՀ կառավարությանը, սակայն ՀՀ քաղաքաշինության նախարարությունը տեղեկացրել է, որ ներկայումս քննարկման փուլում է գտնվում իրենց կողմից մշակված ՀՀ տարածքում /բացառությամբ աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում ընդգրկված բնակավայրերի/ քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող և քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածությամբ ապահովվման հայեցակարգը, որով առաջարկվում է հստակեցնել խնդրի լուծման ուղղություններն ու մոտեցումները:

Ավաղ, ծանոթանալով հիշյալ հայեցակարգի նախագծին, հայտնաբերել ենք, որ <մեկ սենյակ պակաս> մասով՝ ոչ մի փոփոխություն չի առաջարկվում: Մենք կրկին առաջարկությամբ դիմել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարությանը՝ վերանայելու իր իսկ կողմից կազմված հայեցակարգի նախագիծը և այն համապատասխանեցնել միջազգային չափանիշներին:

Դ) 1988-1992թթ. Ադրբեջանից Հայաստան բռնագաղթած մեր հայրենակիցների բնակարանային պայմանների և բնակարաններով ապահովվելու հիմնախնդիրները

Քաղաքական և սոցիալական անկայունության արդյունքում և մասնավորապես Ղարաբաղյան հակամարտության հետ կապված 1988-1992թթ. Հայաստան եկան մեծ թվով փախստականներ: Հայաստանի տնտեսական ծանր վիճակի պատճառով նրանցից շատերը

³ ՀՀ միացել է 25.12.2003թ. /ՀՀ ՊՏ 5/304/ 21.01.2004թ./:

⁴ Բնակարանի իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել, որոնք ուղղված կլինեն՝ 1) նպաստելու համապատասխան ստանդարտի բնակարանի մատչելիությանը, 2) կանխելու և կրճատելու անօթևանությունը՝ նպատակ ունենալով դրա աստիճանական վերացումը, 3) բնակարանի գները մատչելի դարձնել համապատասխան ռեսուրսնե չունեցողների համար:

հեռացան հանրապետությունից, հիմնականում մեկնելով Ռուսաստանի Դաշնություն: ԽՍՀՄ փլուզումը, հակամարտությունը ԼՂՀ-ում հանգեցրին Հայաստանի բնակչության կենսամակարդակի կտրուկ նվազման: Երկրաշարժը, որը տեղի ունեցավ Հայաստանում 07.12.1988թ., հազարավոր մարդկանց կյանք խլեց և հազարավոր մարդկանց թողեց անօթևան և նրանցից շատերը մինչև օրս տեղավորված են ժամանակավոր կացարաններում կամ բնակվում են հեռավոր գյուղերում: Աղբբեջանի բռնագաղթած փախստականների մեծ մասը Աղբբեջանի քաղաքների բնակիչներ են, բայց այսօր նրանցից շատերն ապրում են գյուղական համայնքներում և վարչական շենքերում: Իրավիճակն առավել ևս սրվեց թերի իրավական դաշտի կարգավորման պատճառով, որը պայմանավորված էր ոչ միայն տնտեսական ճգնաժամով, որում երկիրը հայտնվել էր, այլ նաև համապատասխան իրավական դաշտի բացակայության պատճառով:

1988-1992թթ. Աղբբեջանից բռնագաղթած հազարավոր մեր հայրենակիցներ տեղավորվել են լքված, ազատված առանձնատներ ու բնակարաններ, ոչ բնակելի շինություններ և կառույցներ, որոնք հնարավոր է եղել որոշ չափով դարձնել բնակելի: Այժմ հարյուրավոր փախստականներ դեռևս բնակվում են հանրակացարաններում, հյուրանոցներում, պանսիոնատներում և բնակեցման համար հարմարեցված այլ շինություններում, ոմանք էլ՝ Երևան քաղաքի հասարակության և պետության կարիքների համար գերակա շահ ճանաչված տարածքներում /նախկին Լալայանց և Բյուզանդի փող./, վթարային շենքերում:

ՀՀ կառավարության 29.04.1992թ. <ՀՀ-ում փախստականների սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին> թիվ 255 որոշմամբ /ուժը կորցրած է ճանաչվել 11.01.2000թ./ վերահաստատվել է փախստականների կոմունալ կենտրոններում բնակվելու իրավունքը, որով կարգավորվել է փախստականների վտարման հետ կապված խնդիրը մինչև համապատասխան մշտական բնակտարածություն տրամադրելը: Հետագայում, նրանք որպես փախստականներ, ներկայացվել են հաշվառման ըստ իրենց ժամանակավոր կամ փաստացի բնակության վայրի՝ ՀՀ կառավարության 09.08.1997թ. <ՀՀ բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառման և բնակելի տարածությունների հատկացման կարգը հաստատելու մասին> թիվ 330 որոշման պահանջներին համապատասխան:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ փախստականների որոշ զանգված, ցավոք, առ այսօր ապահովված չէ նույնիսկ ժամանակավոր կացարանով, իսկ կացարանով ապահովված փախստականների մեծ մասը բնակվում է ծայրահեղ անմխիթար սանիտարահիգիենիկ պայմաններում, քանի որ նրանց հատկացված տարածքներում տարիներ ի վեր վերանորոգման աշխատանքներ չեն կատարվել: Թեև սկսած 1988թ. մինչև օրս փախստականների բնակարանային խնդիրների լուծման նպատակով ՀՀ կառավարությունն ինչպես իր սեփական միջոցներով, այնպես էլ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ, իրականացրել է մի շարք ծրագրեր, այնուամենայնիվ, փախստականների բնակարանային խնդիրներն առ այսօր շարունակում են մնալ չլուծված, իսկ պետական գույքի մասնավորեցման գործընթացի արդյունքում՝ փախստականները բռնի վտարվում են առանց փոխհատուցումների:

ՀՀ կառավարության պետական լիազոր մարմնի՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միզրացիոն պետական ծառայության տվյալներով՝ 1988-1992թթ. Աղբբեջանից բռնագաղթած շուրջ 10.000 ընտանիք համարվում է բնակարանի խիստ կարիքավոր: Ժամանակավոր կացարաններում առաջնահերթ բնակարանի կարիքավոր 3470 ընտանիք 2003թ. հաշվառվել են ծառայության կողմից և ՀՀ կառավարության 20.05.2004թ. <1988-1992թթ. Աղբբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային

ապահովության առաջնահերթ ծրագրի մասին» թիվ 747-Ն որոշման համաձայն նախորդ տարիներին ապահովվել են բնակարաններով, բայց մինչև օրս մի ստվար զանգվածի փախստականներ սպասում են բնակարաններով ապահովվելու իրենց հերթին:

Սեփականաշնորհման գործընթացի արդյունքում հաճախ ոտնահարվում են մասնավորեցվող շենքերում բնակվող փախստականների իրավունքներն ու օրինական շահերը: Փախստականներին համարժեք կացարանով կամ փոխհատուցմամբ ապահովելու պարտավորություն չի նախատեսվում ոչ <Պետական գույքի մասնավորեցման մասին> ՀՀ օրենքով, ոչ ՀՀ կառավարության որոշումներով, ոչ էլ պետական գույքի օտարման պայմանագրերով: Որպես կանոն վարչական շենքերը մասնավորեցվում են փախստականների հետ միասին, ովքեր հետագայում վտարվում են այդ շենքերի նոր սեփականատերերի կողմից՝ առանց որևէ կացարան կամ փոխհատուցում տրամադրելու: Ճիշտ է հիշյալ իրավական ակտերում փախստականների վերաբերյալ դրույթի բացակայությունն ինչ-որ չափով մեղմացվում է ՀՀ կառավարության այլ անհատական ակտերով, որոնցով գնորդները պարտավորեցվում են փախստականներին տրամադրել այլ բնակկտարածություն կամ կատարել փոխհատուցում: Նման դրույթների ընդունումը ողջունելի է, սակայն բավարար չէ, քանի որ այդ նորմի սահմանումը և նոր սեփականատիրոջ հիշյալ պարտավորությունը պետք է առնվազն սահմանված լինի օրենքով:

ՄԱԿ ՓԳՀ ՀՀ պետական/հանրային սեփականություն հանդիսացող փախստակաբնակ կոմունալ կենտրոնների սեփականաշնորհման վերաբերյալ դիտարկումներում նշել է, որ փախստականներին իրենց կամքին հակառակ, առանց համապատասխան իրավական կամ այլ կարգի պաշտպանություն տրամադրելու վտարման յուրաքանչյուր դեպք դիտվում է <բռնի վտարում>, այսինքն՝ մարդու իրավունքների կոպիտ խախտում: Վերը թվարկված միջազգային իրավական ակտերի իմաստով՝ առանց համապատասխան պաշտպանության, փախստականների վտարելու յուրաքանչյուր փորձ կդիտվի անձի <տան անձեռնմխելիության իրավունքի> խախտում և անօրինական <միջամտություն>:

Սակայն 01.01.1999թ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո թվով 400 որոշումներ, ներառյալ ՀՀ կառավարության 29.04.1992թ. թիվ 255 որոշումը, ճանաչվեցին ուժը կորցրած, որը բերեց նրան, որ կոմունալ /սեփականաշնորհման ենթակա/շենքերում բնակվող փախստականները կանգնեցին վտանգի առաջ: Քանի որ այդ ժամանակ և ներկայումս էլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդ. երկորրդ կետի՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի ծագումը, իրականացման պայմանները և դադարումը սահմանվում են սեփականատիրոջ հետ նոտարական կարգով վավերացված գրավոր պայմանագրով: Բնակելի տարածության օգտագործման իրավունքը ծագում է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով այդ իրավունքի գրանցման պահից, իսկ փախստականները, ինչպես նաև մեծ թվով տեղացի բնակիչներ չեն կարողանում ապահովել այդ նորմի պահանջը, արդյունքում դատարանները քննության առնելով սեփականատերերի վտարման մասին հայցապահանջները՝ բավարարում են:

Ե) Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման գոտիներում իրականացվող կառուցապատումների և հարկադիր վտարումների վերաբերյալ

ՀՀ սահմանադրական դատարանը 18.04.2008թ. (թիվ ՄԴՈ-630) քննության առնելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 104, 106, 108 հոդվածների, ՀՀ կառավարության կողմից 01.08.2002թ. ընդունված <Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին> թիվ 1151-Ն որոշման՝ ՀՀ սահմանադրության 31-րդ հոդ. համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործը, որոշել է դրանք ճանաչել ՀՀ սահմանադրությանը հակասող և անվավեր: Մինչև ժամանակ մինչև 2006թ. հոկտեմբերի 1-ը ՀՀ կառավարությունն ու ՀՀ ազգային ժողովը հնարավոր սեղմ ժամկետներում ՀՀ սահմանադրության և սահմանադրական դատարանի որոշման պահանջներին պետք է համապատասխանեցնեին և օրենքով հստակ կանոնակարգեին բացառիկ՝ գերակա հանրային շահերով պայմանավորված հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման իրավական ռեժիմը:

Մինչ ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ որոշ իրավական ակտեր ու նորմեր կճանաչեր հակասահմանադրական, ՀՀ-ում մինչև 2006թ. հարկադիր վտարումները տեղի են ունեցել ապօրինի՝ առանց օրենքի հիման վրա և հարկադրաբար ՀՀ ոստիկանության և դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության աշխատակիցների կողմից:

ՀՀ օրենսդրությունը՝ հարկադիր վտարման և դրա ընթացքում մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության երաշխիքների վերաբերյալ

ՀՀ սահմանադրություն

- 1) **1-ին հոդ.** Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:
- 2) **3-րդ հոդ.** մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:
- 3) **5-րդ հոդ.** պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման հիման վրա: Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:
- 4) **6-րդ հոդ.** 1, 2, 4-րդ մասեր ՀՀ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

- 5) **8-րդ հոդ.** ՀՀ-ում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:
- 6) **14-րդ և 14.1-րդ հհ.** մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից: Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:
- 7) **18-րդ հոդ.** յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը: Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին:
- 8) **24-րդ հոդ.** յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
- 9) **31-րդ հոդ.** յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի: Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ: Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
- 10) **34-րդ հոդ.** յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար:
- 11) **43-րդ հոդ.** մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի

պաշտպանության համար: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել ՀՀ միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք

1. **163-րդ հոդ.** Սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:
2. **218-րդ հոդ.** սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:
3. **274-րդ հոդ.** սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:
4. **278-րդ հոդ.** սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները զուգորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ:
5. **279-րդ հոդ.** 1. Սեփականության իրավունքը դադարում է սեփականատիրոջ կողմից իր գույքն օտարելու, սեփականության իրավունքից հրաժարվելու, գույքը ոչնչացնելու և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի՝ օրենքով նախատեսված այլ դեպքերում: 2. Չի թույլատրվում սեփականատիրոջ գույքը հարկադրաբար վերցնել կամ առգրավել, բացի այն դեպքերից, երբ օրենքով նախատեսված հիմքերով՝
 - 1) պարտավորությունների համար գույքի վրա տարածվում է բռնագանձում (հոդ. 281).
 - 2) օտարվում է այն գույքը, որն օրենքի ուժով չի կարող պատկանել տվյալ անձին (հոդ. 282).
 - 3) սեփականության հասարակության և պետության կարիքների համար օտարվելու (հոդ. 218).
 - 4) վերցվում են անտնտեսվար պահվող մշակութային արժեքները (հոդված 284).
 - 5) կատարվում է ռեկվիզիցիա (հոդված 285).
 - 6) կատարվում է բռնագրավում (հոդված 288).
 - 7) իրավաբանական անձը դատարանի վճռով վերակազմակերպվում կամ լուծարվում է (63 և 67 հհ.).
 - 8) գույքն օտարվում է՝ սույն օրենսգրքի 197 հոդ. 4-րդ կետով, 208 և 220 հհ. նախատեսված դեպքերում:
3. Պետության սեփականությանը պատկանող գույքն օտարվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց՝ մասնավորեցման (ապապետականացման) մասին օրենքներով սահմանված կարգով:
4. Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությանը պատկանող գույքի պետականացումը (ազգայնացումը) կատարվում է օրենքի հիման վրա, այդ գույքի արժեքի ու մյուս վնասների հատուցմամբ՝ սույն օրենսգրքի 286 հոդվածով սահմանված կարգով:
5. Գույքային իրավունքները դադարում են սույն օրենսգրքի 216 և 247 հոդվածներով, ինչպես նաև օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

ՀՀ հողային օրենսգիրք

- 1. 104-րդ հոդ.** հողամասի օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:

ՀՀ սահմանադրական դատարանի 18.04.2006թ. ՍԴՈ-630 որոշման հիման վրա ՀՀ կառավարության կողմից ՀՀ ազգային ժողովի քննարկմանը ներկայացվեց <Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին> 18 հոդվածից բաղկացած ՀՀ օրենքի նախագիծը, որն ընդունվեց 27.11.2006թ. և ուժի մեջ մտավ 30.12.2006թ.:

<Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին> ՀՀ օրենքը սահմանում է հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հիմքը, կարգը, օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման տրման կարգը, բացառիկ՝ գերակա հանրային շահի հասկացությունը և դրա որոշման կարգը: Սույն օրենքը չի տարածվում ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ, արտակարգ իրավիճակների պայմաններում սեփականության օտարման հարաբերությունների վրա: Սույն օրենքի 4-րդ հոդ. <դ> ենթակետով հանրային շահը գերակա է ճանաչվում ՀՀ կառավարության որոշմամբ, իսկ 11-րդ հոդ. համաձայն՝

1. Օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում: Համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից 15% ավելի գումարը:

2. Օտարվող սեփականության շուկայական արժեքը բաց և մրցակցային շուկայում սեփականություն հանդիսացող գույքի վաճառողի և գնորդի գիտակցաբար, արդարացի առևտրի պայմանների պահպանմամբ և օրինական գործողությունների արդյունքում ձևավորվող, գույքի վաճառքի առավել հավանական գինն է: Եթե օտարվող սեփականության համար առկա չէ համապատասխան բաց և մրցակցային շուկա, ապա սեփականության շուկայական արժեքը որոշվում է այնպիսի հաշվարկման մեթոդով, որն արդարացի կհամարի դատարանը:

3. Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների շուկայական արժեքի գնահատումն իրականացվում է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

4. Օտարվող սեփականության շուկայական արժեքը չպետք է ներառի սեփականության արժեքի որևէ նվազեցում կամ ավելացում, որը պայմանավորված է հետևյալ պատճառներից որևէ մեկով՝

- ա) այն նպատակով, որի համար օտարվում է սեփականությունը.

- բ) հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հանգամանքով.

- գ) ձեռքբերողի ցանկացած նախնական գործողությամբ, որը կապված է հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հետ (այդ թվում՝ նախնական ուսումնասիրությունը).

- դ) սեփականության նկատմամբ առկա գույքային իրավունքներով:

5. Սեփականության օտարման հետ կապված օտարվող սեփականության սեփականատիրոջ համար պետական կամ տեղական ինքնակառավարման

մարմինների կողմից այդ կապակցությամբ առաջացող ֆինանսական պարտավորությունները (հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ) հատուցում է ձեռքբերողը:

6. Օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին փոխհատուցումը տրվում է օտարվող սեփականության դիմաց տրվող փոխհատուցման գումարից:»»:

Մույն օրենքի 4-րդ հոդ. <դ> ենթակետի հիման վրա ՀՀ կառավարությունն ընդունել է մի շարք որոշումներ, որոնցով գերակա շահ է ճանաչել Երևան քաղաքի մի շարք թաղամասեր, շենք ու շինություններ և հատկացրել է որոշ տնտեսվարող սուբյեկտներին՝ կառուցապատում իրականացնելու նպատակով: Գործնականում ՀՀ-ում մասնավոր ընկերության շահն ավելի է բարձր է դասվում, քան հասարակության և պետության, քանզի կառուցապատողները չնչին գումարով փոխհատուցելով կամ <տեղում բնակարան ստանալու> պայմանագրեր կնքելով հնարավորություն են ունենում մի քանի բնակիչ-սեփականատիրոջ տան և հողամասի տեղում կառուցել բազմաբնակարան բնակելի կամ բազմաֆունկցիոնալ շենք և հետագայում այդ շենքի բնակարանները վաճառել ավելի թանկ գներով:

Երբեմն կառուցապատողները դիտավորյալ ժամանակից շուտ սկսում են շինարարական աշխատանքները, որոնց արդյունքում այդ շինարարության հարևանությամբ գտնվող բնակարանները ձեռք են բերում վթարայնություն և դառնում բնակության համար ոչ պիտանի, դրանք կորցնում են իրենց շուկայական արժեքը, իսկ բնակիչ-սեփականատերերն էլ ստիպված են լինում ժամանակից շուտ լքել իրենց բնակարանները, ստանալով չնչին փոխհատուցում կամ ընդունելով <տեղում բնակարան ստանալու> անիրատեսական առաջարկը:

ՀՀ սահմանադրության 31-րդ հոդ. 3-րդ մասի իմաստից երևում է, որ սեփականության հարկադիր օտարման վերաբերյալ որոշումը պետական մարմինը կարող է ընդունել միայն բացառիկ դեպքերում և այն բանից հետո, երբ սեփականության նման օտարման անհրաժեշտությունը հիմնավորված է հանրային գերակա շահով: ՀՀ սահմանադրության 31-րդ հոդ. 3-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունից հետևում է, որ.

1. նախատեսվում է սեփականատիրոջ սեփականության իրավունքի սահմանափակման և սեփականության հարկադիր օտարման հնարավորություն,
2. սեփականության հարկադիր օտարում կարող է իրականացվել միակ նպատակի համար՝ երբ առկա է հասարակության և պետության կարիքը, որը պետք է լինի կոնկրետ և հստակորեն արտահայտված որոշակի սեփականության առնչությամբ, և որը պետությունը պարտավոր է իր գործառույթներն իրականացնելիս, հաշվի առնել ու բավարարել,
3. սակայն հասարակության և պետության ամեն մի կարիք սեփականության օտարման հիմք չի կարող հանդիսանալ, այդ կարիքները պետք է լինեն բացառիկ՝ պայմանավորված գերակա հանրային շահով,
4. սեփականության օտարման դեպքում պետք է երաշխավորված լինի նախնական փոխհատուցումը,
5. այդ փոխհատուցումը պետք է լինի համարժեք:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշմամբ նկատել է, որ պետությունը պարտավոր է օրենքի միջոցով սահմանել հասարակության և պետության կարիքների համար սեփականությունը հարկադիր օտարելու կարգը, ինչը պետք է ապահովի

սեփականատիրոջ իրավունքը՝ նախապես իմանալու, թե ինչու է հարկադիր միջամտություն ցուցաբերում սեփականության իր իրավունքին և ինչ կոնկրետ կարիքների համար է սեփականությունն օտարվում:

«Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել ՀՀ միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները» (հոդվ. 43): Այս առնչությամբ ուշադրության արժանի է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի այն դրույթը, համաձայն որի՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Հարկ է նկատել նաև, որ միջազգային պրակտիկայում սեփականության օտարման համար հիմք են պետության և հասարակության այնպիսի կարիքները, ինչպիսիք են ճանապարհների, երկաթուղիների, խողովակաշարերի, օդանավակայանների, հանրային տարաբնույթ նշանակության այլ ենթակառուցվածքների, պաշտպանական նշանակության օբյեկտների շինարարությունը, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, պատմամշակութային հուշարձանների պաշտպանության, բնակավայրերի կառուցապատման և հասարակական ու պետական կարևորության տարբեր այլ ծրագրերի իրականացումը: Սակայն բոլոր պարագաներում իրավական խնդիրն այն է, որ օրենքով սահմանված կարգով ամեն մի կոնկրետ դեպքում պետք է հիմնավորվի ծրագրի այդպիսին լինելը և այդ մասին ժամանակին ու պատշաճ ձևով տեղեկացվեն շահագրգիռ անձինք (նաև հասարակայնությունը)՝ ստանալով պատշաճ տեղեկատվություն և իրենց իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորություն: Սակայն գործնականում ՀՀ-ում կատարվում է ուղիղ հակառակը՝ իրացման աշխատանքները կատարվում են, որոշ կառուցապատողների մասնավոր շահերից ելնելով:

Լուրջ խնդիր են հանդիսանում նաև գույքի գնահատման մեխանիզմները: Բնակիչների բողոքների այս խումբը վերաբերում է իրենց գույքի՝ շուկայական գնին ոչ համարժեք հնահատմանը: Գնահատումն իրականացվում է գույքի գնահատման՝ պետության կողմից մատնանշված գործակալությունների կողմից, իսկ եթե քաղաքացիները ցանկանում են դիմել այլ գործակալությունների, ապա վերջիններս հիմնականում հրաժարվում են գնահատել իրացվող գոտիներում գտնվող գույքը, քանի որ առկա է մտավախություն հետագայում խնդիրներ ունենալ պետական մարմինների հետ:

Գործնականում ՀՀ օտարման տարածքներ ձեռքբերողներն ու կառուցապատողները չեն կարողանում բնակիչ-սեփականատերերին ֆինանսական փոխհատուցում առաջարկել և վճարել, բացի նույն տարածքում կառուցվելիք շենքից բնակարան հատկացնելու անիրատեսական առաջարկից, քանի որ չեն կարող երաշխավորել թե իրենց հետ կնքված պայմանագրերով նախատեսված 36 կամ 42 ամիս հետո բնակելի շենքերը կհանձնվեն շահագործման, թե՛ ոչ, իսկ բնակիչներն էլ այդ ժամկետում կստանա իրենց նոր բնակարանները, դա էլ հարց է:

Պետական վերահսկողության բացակայությունը քաղաքաշինության ոլորտում

Գործնականում ՀՀ կառավարությունը դե ֆակտո չի իրականացնում իր վերահսկողական գործառնությունները կառուցապատողների նկատմամբ և ոչ միջոցներ չի

ձեռնարկում ժամկետների խախտում թույլ տվող կառուցապատողներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ, կարծես թե պետական վերահսկողությունն այդ ոլորտում բացակայում է: Ըստ իս, նմանատիպ խախտումների արդյունքում, պետության կարիքների համար իրացվող տարածքներում բնակվող քաղաքացիները մեխանիկորեն ձեռք են բերում պետության սոցիալական քաղաքականության <գոհ>-ի կարգավիճակ և հանրապետությունում առաջանում է սոցիալական լարվածություն:

Չնայած, կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելու համար <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 154.1 հոդ. նախատեսում է վարչական պատասխանատվություն: Սակայն մինչև օրս որևէ պետական լիազոր մարմնի կողմից որևէ կառուցապատող վարչական պատասխանատվության չի ենթարկվել, որոնք համատարած խախտում են քաղաքային իշխանության հետ կնքված կառուցապատման պայմանագրերով սահմանված ժամկետները:

Երևանի նորընտիր քաղաքապետը՝ Երևան քաղաքի ավագանու, իսկ ՀՀ վարչապետը՝ ՀՀ կառավարության նիստերի ժամանակ բազմիցս հայտարարում են, որ կառուցապատման պայմանագրերը պետք է լինեն շատ կոշտ և հստակ, դրա հետ մեկտեղ խիստ վերահսկողություն պետք է սահմանեն կառուցապատողների կառուցապատման պայմանագրերի կատարման ժամկետների և որակի ապահովման նկատմամբ, սակայն Երևանում օտարման գոտիներում կատարվող կառուցապատում իրականացնող ընկերությունները սկսած 2005թ. մինչև օրս չեն ապահովել շինարարության նույնիսկ 50%-ը, համապատասխան պայմանագրեր կնքած բնակիչները բողոքում են տարածքի ձեռք բերող և կառուցապատող ընկերությունների դեմ: /օրինակ՝ www.tert.am 27.05.2011թ. <Սենց չի կարա շարունակվի> Կոնդեցիները նախագահից պահանջում են իրենց բնակարանները /տեսանյութ/:

<Քաղաքաշինության մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդ. համաձայն կառուցապատողը պարտավոր է մինչև շինարարություն սկսելը, ինչպես նաև շինարարության ընթացքում համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ՝ հասցվելիք վնասների փոխհատուցման վերաբերյալ, ինչը ՀՀ-ում կառուցապատողների կողմից չի ապահովվում, վառ օրինակ Երևանի Կոնդ թաղամասում կատարվող շինարարությունը:

Նույն օրենքի 13-րդ հոդ. համաձայն <Քաղաքաշինական գործունեության իրականացման ընթացքում հասարակայնության ներկայացուցիչներն իրավունք ունեն՝ ա) ստանալ ստույգ տեղեկություններ իրենց կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին.

բ) մինչև հրապարակված քաղաքաշինական ծրագրերի եւ նախագծերի հաստատումը՝ մասնակցել դրանց քննարկումներին, ներկայացնել իրավական եւ նորմատիվ ակտերով հիմնավորված դիտողություններ, առաջարկություններ, այլընտրանքային նախագծեր եւ ծրագրեր.

գ) հրապարակված քաղաքաշինական ծրագրերն ու նախագծերը սեփական միջոցներով ենթարկել անկախ փորձաքննության: Տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են ապահովել քաղաքաշինական գործունեության իրականացմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությունը: Նրանք պարտավոր են զանգվածային լրատվության միջոցներում

հրապարակումներով, հասարակական քննարկումներով, ծրագրերի եւ նախագծերի ցուցադրման միջոցառումներով իրազեկել ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կենսագործունեության միջավայրի, տարածքի գոտիավորման եւ քաղաքաշինական նախատեսվող այլ փոփոխությունների մասին:»:

Երևանի օտարման գոտիներում կառուցապատում իրականացնող ընկերությունների կողմից չի պահպանվում նաև ՀՀ կառավարության 28.10.1998թ. <Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին> թիվ 660 որոշման պահանջները:

Ավելին, որպես կանոն, օտարվող տարածքի բնակչությունը տեղեկացված չի լինում թե ինչ շինարարական աշխատանքներ են իրականացվում, որ իրավաբանական կամ ֆիզիկական անձի կողմից է այն իրականացվում, որքան հողամասի վրա է իրականացվում շինարարությունը, որքան ժամկետում, շինարարության թույլտվության, կառուցվող շինությունների հատակագծերի, ինչպես նաև այլ տվյալների մասին: Գործնականում հասարակայնությանը հայտնի է դառնում այլ ճանապարհներով:

Եղել են դեպքեր, օրինակ՝ Կոնդ թաղամասում շինարարություն /կառուցապատում/ իրականացնող ընկերությունը չունի կառուցվող շենքի գլխավոր հատակագիծը, ճարտարապետահատակագծային առաջադրանքները և այլն: Կոնկրետ Կոնդ թաղամասում հատակագիծը պարբերաբար փոփոխությունների է ենթարկվում, իսկ շինարարությունն էլ պարբերաբար կասեցվում է՝ հասարակայնությանն անհասկանալի պատճառներով: Հասարակությանն իրազեկելու նպատակով շինարարության համար հատկացված շինհրապարակներում ցանկապատի առավել տեսանելի տեղամասում հատուկ վահանակ գործնականում չի տեղադրվում և մինչև օրս էլ չի տեղադրվել, ինչը տեղիք է տալիս նշելու, որ նրանք նախապես մշակված պլաններ և ծրագրեր չեն ունենում:

Փաստորեն, տարածքի բնակիչները, որպես շահագրգիռ հասարակայնության անդամներ, բավարար տեղեկացված չեն ընթացող շինարարական նախագծերի ժամկետների, բյուջեների, դրսևորումների վերաբերյալ:

Կարևորելով քաղաքաշինական գործունեության իրականացմանը հասարակության մասնակցությունը և նրանց տեղեկացված լինելու իրավունքը՝ ժամանակին ՀՀ կառավարությանն առաջարկել ենք սահմանել կարգ:

Արդյունքում, ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.01.2008թ. թիվ 11-Ն հրամանում կատարվել է լրացում. Տվյալ հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 <Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում> շինարարական նորմերը լրացվել է նոր <7.1.> կետով հետևյալ բովանդակությամբ՝ <Մինչև շինարարություն սկսելը՝ հասարակությանն իրազեկելու նպատակով շինարարության համար հատկացված շինհրապարակի ցանկապատի /այդ թվում՝ ճանապարհաշինական աշխատանքների ուղեգծի/ առավել տեսանելի տեղամասում տեղադրում է հատուկ վահանակ, որը պետք է պարունակի՝ պատվիրատու և կապալառու կազմակերպությունների տվյալների, ծրագրի անվանման ու նպատակային նշանակության, շինարարական աշխատանքների սկզբի և ավարտի ժամկետների, իսկ ՀՀ պետական բյուջեի /այդ թվում՝ պետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային/ միջոցների կամ դրանց ներգրավմամբ և համայնքային բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարական աշխատանքների դեպքում նաև

շինարարության նախահաշվային արժեքի մասին տեղեկատվություն՝ պահպանելով վահանակը մինչև ավարտված շինարարության փաստագրումը:»:

ՀՀ կառավարությանը բազմիցս խնդրել ենք քաղաքաշինական նորմերն ու օրենքների պահանջները խախտելու դեպքում կառուցապատողների նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառել, ինչպես նաև պարտավորեցնել տվյալ տարածքում շինարարություն իրականացնող ընկերություններին /կառուցապատողներին/ քաղաքաշինական նորմերին համապատասխան փակցնել տեղեկատվական վահանակ: Սույն իրավահարաբերություններում, որպես կանոն, մեր հանրապետությունում տուժում է բնակիչը, անշարժ գույքի սեփականատերը, նրանց հայցադիմումներով բարձրացված պահանջները նույնիսկ արդարացի լուծում չեն ստանում ՀՀ դատական ատյաններում, հետևաբար մեր համաքաղաքացիներն իրենց հույսը կապում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ:

Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջամտությունը հարկադիր վտարումների ժամանակ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43.1 հոդ. կատարողական գործողությունների կատարման նպատակով (բռնագանձում, վտարում, բնակեցում և այլն) հարկադիր կատարողն իրավունք ունի անարգել մուտք գործելու պարտապանին սեփականության իրավունքով պատկանող բնակարան կամ այլ շինություն: Կատարողական գործողությունների կատարման նպատակով այլ անձանց պատկանող բնակարան կամ շինություններ հարկադիր կատարողը կարող է մուտք գործել այդ բնակարանի կամ շինության սեփականատիրոջ (ժամանակավոր տիրապետողի) համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում հարկադիր կատարողը կարող է մուտք գործել բնակարան կամ շինություններ դատարանի համապատասխան որոշման հիման վրա:

Նույն օրենքի 64-րդ հոդ. համաձայն վտարումը կատարողական թերթում նշված շենքը վտարվողից (վտարվողներից) և նրա (նրանց) գույքից ազատելն ու ազատված շենքից օգտվելն արգելելն է: 2. Հարկադիր կատարողը պատշաճ ձևով տեղեկացնում է պարտապանին հարկադիր վտարման օրվա և ժամանակի մասին: Վտարման մասին պատշաճ ձևով տեղեկացված պարտապանի չներկայանալը կամ պարտապանի գտնվելու վայրը պարզելու անհնարինությունը արգելք չէ կատարողական թերթի պահանջը կատարելու համար: 3. Հարկադիր կատարողը վտարումը կատարում է պարտապանի գույքի պարտադիր գույքագրմամբ: Անհրաժեշտության դեպքում հարկադիր կատարողն ապահովում է պարտապանի գույքի պահատվությունը՝ վերջինիս վրա դնելով կատարված ծախսերի հատուցումը: 4. Վտարման վերաբերյալ կատարողական թերթի կատարման մասին հարկադիր կատարողը կազմում է արձանագրություն:

Նույն օրենքի 64.1-րդ հոդ. համաձայն բնակարանները, բնակելի տները և այլ շինություններն ամբողջությամբ աճուրդի ներկայացնելիս հարկադիր կատարողն իրավունք ունի մինչև աճուրդի իրականացումն իր որոշմամբ վտարելու բնակարանը, բնակելի տունը կամ շինությունն զբաղեցնող պարտապան սեփականատիրոջը, ինչպես նաև այն անձանց, որոնց օգտագործման իրավունքը գրանցված չէ օրենքով սահմանված կարգով: Հարկադիր աճուրդով օտարված բնակարանի, բնակելի տան և այլ շինության նոր սեփականատիրոջ պահանջով հարկադիր կատարողն իր որոշմամբ պարտավոր է վտարելու բնակարանը, բնակելի տունը կամ շինությունն զբաղեցնող պարտապան

սեփականատիրոջը, ինչպես նաև այն անձանց, որոնց օգտագործման իրավունքը գրանցված չէ օրենքով սահմանված կարգով:

Գույքային իրավունքներ չունեցող ունեցող անձինք

Օտարման գոտիների շատ քաղաքացիներ իրենց անձնագրերում ունեն մշտական և փաստացի հաշվառում գրառում և միննույն ժամանակ մի քանի տասնյակ տարիներ բնակվում են իրենց զբաղեցրած տներում և փաստացի տիրապետում ու օգտագործում են բակային տարածքի հողամասերը, սակայն այդ տների և հողամասերի սեփականատերերը հանդիսանում են այլ քաղաքացիներ, որոնք նրանց հետ չունեն ոչ մի ազգակցական կապ: Ինչ սկսվել է Երևանի հին թաղամասերի իրացման աշխատանքները, այդ սեփականատերերը, օգտվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածով իրենց տրված բացառիկ իրավունքից, հայցադիմումներ են ներկայացրել և պատրաստվում են ներկայացնել դատարան՝ այդ հաշվառված անձանց իրենց զբաղեցրած տներից առանց փոխհատուցման վտարելու պահանջների մասին, քանի որ նրանցից ոչ մեկը չունի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված բնակելի տարածության օգտագործման իրավունք, որը գրանցված կլինի պետական մարմնում:

ՀՀ ԱԺ-ի կողմից 04.10.2005թ. ընդունված ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին թիվ ՀՕ-188-Ն ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով ամրագրվել է, որ.

<Եթե անձը մինչև 1999թ. հունվարի 1-ը սահմանված կարգով հաշվառված (գրանցված) է եղել բնակելի տարածությունում եւ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահը մշտապես կամ առավելապես բնակվել է այդ բնակարանում, ապա մինչև 2006թ. դեկտեմբերի 31-ը սեփականատիրոջ կողմից բնակության իրավունքը դադարեցնելու հայցադիմում ներկայացնելու դեպքում փոխհատուցումը կատարվում է սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով: Եթե սեփականատիրոջ կողմից բնակության իրավունքը դադարեցնելու հայցադիմումը ներկայացվում է դատարան 2007թ. հունվարի 1-ից հետո, ապա սույն կետով սահմանված պաշտպանությունից օգտվում են միայն այն անձինք, որոնց բնակելի տարածության նկատմամբ օգտագործման իրավունքը գրանցված է սահմանված կարգով: Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությամբ սահմանված նորմը կիրառվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո կնքված բնակելի տարածության օգտագործման պայմանագրերի նկատմամբ>:

Հիշատակված իրավական դրույթը թույլ է տալիս մի խումբ սեփականատերերի, այդ թվում նաև օտարվող տարածքների ձեռքբերողներին կամ կառուցապատողներին դատարանների միջոցով, տասնյակ տարիներ շարունակ բնակվող և հաշվառված անձանց՝ իրենց ընտանիքներով, մի գրչի հարվածով վտարել իրենց զբաղեցրած տներից՝ առանց որևէ փոխհատուցման, դարձնելով նրանց անօթևան: Որոշ դեպքերում հասարակական կազմակերպությունս նպաստում ենք, որպեսզի հաշտության եզրեր գտնվեն սեփականատիրոջ, տարածքի ձեռքբերողի և հաշվառված անձանց միջև՝ վերջիններիս բնակելի տարածքներով կամ ֆինանսական օգնություն տրամադրելու հարցում: Բայց կարծում ենք, որ միայն օրենսդիր և գործադիր իշխանությունները կարող են օրենսդրական լուծում տալ այս հիմնախնդրին՝ ընդունելով համապատասխան իրավական ակտ, որով կերաշխավորվեն պետության և հասարակության կարիքների համար սեփականության օտարվող տարածքներում անձնագրային հաշվառում ունեցող քաղաքացիների բնակարաններով ապահովելու իրավունքը, միայն այն նպատակով,

որպեսզի դատարանների կողմից վերջիններիս նկատմամբ չկիրառվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի պահանջները:

Հարկ է նկատել նաև, որ Հայաստանի Հանրապետության բնակչության զգալի մասը չունի բնակելի օգտագործման իրավունք, որը գրանցված կլինի պետական մարմնում: Խորհրդային ժամանակաշրջանից մնացած <հաշվառված է> գրառումն այսօր պահպանվել է շատերիս անձնագրերում, իսկ հիշատակված դրույթի պահանջը սահմանվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ կետով՝ 1999թ. հունվարի 1-ից, իսկ նախորդ տարիներին հաշվառված անձանց բնակելի տարածության օգտագործման իրավունքի պետական գրանցման ներկայացնելու վերաբերյալ օրենսդիրն ու գործադիրը դեռևս չեն անդրադարձել և օրենսդրական ակտով լուծում չեն տվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածում կատարված փոփոխությունների և լրացումների մասին թիվ ՀՕ-188-Ն օրենքի շրջանառության մեջ մնալը և միաժամանակ Երևանում օտարման գործընթաց սկսելը, կարծում ենք խաթարում է մեր պետության կողմից իրականացվող սոցիալական ցանկացած ծրագրի, ինչու չէ նաև ՀՀ կողմից վավերացված միջազգային պարտավորությունները:

ՀՀ <Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին> ՄԱԿ-ի կոնվենցիան վավերացրել է 1993թ., որով պետք է ձեռնարկվեր համապատասխան բոլոր միջոցառումները, այդ թվում օրենսդրական, որպեսզի կանխվեր նրանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերը: Մակայն, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդ. նման ձևակերպմամբ գործողության մեջ մնալն ու դատարանների կողմից կիրառվելու արդյունքում խախտվում են ամուսնալուծվող կանանց և այն երեխաների իրավունքները, ովքեր գտնվում են իրենց մոր խնամքին ու դաստիարակությանը: Անհանգստությունը կայանում է նրանում, որ մեր սոցիալ-տնտեսական, քաղաքական կյանքում տղամարդու դերն ավելի է բարձր է, քան կնոջ: Որպես կանոն բնակարանների սեփականատերերը լինում են տղամարդիկ կամ նրանց ծնողները /խորհրդային ժամանակաշրջանից/:

Ամուսնալուծությունները մեծ մասամբ իրականացվում են դատական կարգով, քանի որ ամուսնալուծվող կանայք իրենց ամուսինների դեմ ներկայացնում են տարբեր պահանջներ՝ բնակարանի ապահովման, երեխայի /ների/ խնամքին ու դաստիարակությանը մասնակցելու, ալիմենտի պահանջներ: Հայ կանայք սովորաբար ֆինանսական կայուն եկամուտ չունեն, չեն աշխատում, հիմնականում գրանցված են կամ զբաղվածության կենտրոններում կամ սոցիալական տարբեր ծրագրերում, սակայն չունեն այն բավարար միջոցները, որ կարող են հոգալ իրենց բնակարան ձեռք բերելու կամ վարձակալելու հարցերը:

Հիմնականում դատարանների կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդ. պահանջի կիրառման արդյունքում, օրինական ուժի մտած վճռով ամուսնալուծվող կանայք, հարկադրաբար վտարվում են նախկին ամուսնու բնակարանից, կամ նրա ծնողների բնակարանից՝ սեփականատիրոջ կողմից առանց փոխհատուցման կամ բնակարանի տրամադրմամբ, քանի որ ինչպես նշել ենք արդեն, կանայք ՀՀ-ում ամուսնանում են և որպես կանոն բնակություն են հաստատում կամ ամուսնու սեփական բնակարանում, կամ ամուսնու ծնողներին սեփականության իրավունքով պատկանող բնակարանում: Շատ քչերն են, որ կարողանում են ամուսնության ընթացքում համատեղ անշարժ գույք ձեռք բերել:

Այսպիսով, ամուսնալուծության ընթացքում կանանց բնակարանով ապահովվելու երաշխիքներ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ: Ամուսնալուծությունից և ամուսնու սեփական բնակարանից հարկադիր վտարվելուց հետո ամուսնալուծված կինը կամ

վերադառնում է իր ծնողների տուն, կամ դիմում է արտագաղթի, կամ թրաֆիկինգի գոհ է դառնում: ՀՀ-ում թրաֆիկինգի վերաբերյալ վիճակագրությունը ցույց է տալիս, որ նրանց մեծ մասն ամուսնալուծված կանայք են:

Ցավալին այն է, որ ամուսնալուծությունների արդյունքում տուժում են նաև երեխաները, ովքեր <Երեխայի իրավունքների մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդ. համաձայն ունեն միայն սեփականատեր կամ վարձակալ հանդիսացող ծնողի բնակարանում ընդամենը բնակվելու իրավունք: Բայց եթե դատարանը որոշում է, որ երեխայի խնամքն ու դաստիարակությունը պետք է հանձնել մորը, ապա այդ դեպքում երեխայի բնակության կամ գտնվելու վայրը համարվում է մոր փաստացի բնակության կամ գտնվելու վայրը: Այսինքն երեխան նույնպես հայտնվում է անօթևանի կարգավիճակ ձեռք բերելու վտանգի մեջ:

Նույնը կարելի է նշել նաև օտարման գոտիներում մշտապես բնակվող զինվորական ծառայությունից, ազատագրկման վայրերից վերադարձող քաղաքացիների համար, ըստ որի նրանք, մինչև ՀՀ բանակ գորակոչվելը և/կամ դատապարտվելը, իրենց անձնագրերում ունեցել են մշտական հաշվառում, սակայն վերադառնալուց հետո նրանք չեն կարողանում վերականգնել իրենց մշտական հաշվառումը, այլ փոխարենը նրանց անձնագրերում ՀՀ ոստիկանության անձնագրային բաժինների կողմից կատարվում է <փաստացի բնակվում է> գրառումը, որը գույքային իրավունքներ չի առաջացնում նրանց համար:

Իհարկե, չի բացառվում, որ Երևան քաղաքի օտարման գոտիներում հնարավոր է լինեն այնպիսի դեպքեր, որ քաղաքացիներն ընդհանրապես հաշվառում չունենան, սակայն չեն բացառվում նաև այլ տարբերակներ, ուստի անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ կառավարությունը Երևանի քաղաքապետարանի միջոցով քայլեր ձեռնարկի բոլոր հնարավոր տարբերակները բացահայտելու, քննարկելու և համապատասխան իրավական ակտով նրանց աջակցության տրամադրման հարցը լուծելու ուղղությամբ:

Սահմանադրական իրավունքի հայտնի մասնագետ Ջոն Պ. Ֆրենկի՝ պետությունն ինքը ոչ մի պայմաններում չպետք է լրացուցիչ անհավասարություն սահմանի, նրանցից միայն մի բան է պահանջվում միատեսակ և հավասար վերբերել բոլոր մարդկանց:

Օրինակ

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ամիրյան փողոց թիվ 4 շենքի մի խումբ նախկին բնակիչ-սեփականատերերի տներ և դրանցով ծանրաբեռնված հողամասերն օտարվել են դեռևս 2005թ. հասարակության և պետության կարիքների համար, սակայն մինչև օրս նրանք ունեն անօթևանի կարգավիճակ և չկա այն հեռանկարը, որ ՀՀ իշխանությունները կարող են նրանց հանել այդ կարգավիճակից:

Հարցի էությունը կայանում է նրանում, որ ՀՀ-ում ձևավորված է մի պրակտիկա, երբ պետության անունից հանդես է գալիս հենց ինքը՝ օտարվող տարածքի ձեռք բերող և կառուցապատող անձը/կազմակերպությունը: Օրինակ. ՀՀ կառավարության մի շարք որոշումների և Երևանի քաղաքապետարանի 08.01.2005թ. թիվ 01/7-11 լիազորագրի հիման վրա հանդես է եկել ներկայումս հանգուցյալ, ՀՀ ԱԺ պատգամավոր և մինևույն ժամանակ անհատ ձեռներեց Մելիք Գասպարյանը, ով իրավունք չունեի տնտեսական գործունեությամբ զբաղվել, որպես պատգամավոր: Այնուամենայնիվ, 2005թ. Մ. Գասպարյանը մի խումբ սեփականատերերի հետ կնքել է անշարժ գույքի օտարման և փոխհատուցման պայմանագրեր: Համաձայն այդ պայմանագրերի՝ 30 ամիս հետո՝ 2007թ., Երևանի Ամիրյան, Զաքյան և Գլխավոր պողոտա հասցեում կառուցվող շենքից նա նշյալ քաղաքացիներին ապահովվելու էր նոր բնակարաններով: 2007թ. անցել է արդեն 4 տարի,

բայց նրանք դեռևս չեն ստացել ո՛չ պայմանագրով նախատեսված նոր բնակարանը, ո՛չ մի քանի տարվա վարձակալության, ո՛չ էլ շինարարության ձգձգման կամ ուշացման համար կառուցապատողի կողմից իրենց վճարվող տույժի գումարները, որոնք սահմանված էին համապատասխան պայմանագրերում: Կառուցապատողը խախտել է նաև Երևանի քաղաքապետարանի հետ կնքված կառուցապատման պայմանագրի բոլոր ժամկետները:

Կառուցապատողի կողմից կնքված պայմանագրերի պայմանները խախտվելու արդյունքում դիմումատուները չեն կարողանում վճարել իրենց բնակարանի վարձի գումարները, որտեղ ժամանակավորապես բնակվում են մինչև նոր բնակարան ստանալը, չեն կարողանում որևէ գործարք կնքել ստանալիք բնակարանի նկատմամբ: Նախկին բնակիչ-սեփականատերերը պահանջում են իրենց խախտված իրավունքների անհապաղ վերականգնում: Վերոնշյալ իրավիճակում են գտնվում մի քանի տասնյակ ընտանիքներ, որոնք կառուցապատող, ՀՀ ԱԺ պատգամավոր Մ. Գասպարյանի մահից հետո, կանգնած են անորոշ կարգավիճակում, իրենց անշարժ գույքն ու ֆինանսական միջոցները կորցնելու վտանգի առջև:

Իսկ Երևանի քաղաքապետարանը՝ <Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ> ՀՈԱԿ-ի միջոցով հայտնում է, որ Երևանի քաղաքապետարանի և կառուցապատող Մ. Գասպարյանի միջև կնքված անշարժ գույքի իրացման և փոխհատուցման մասին պայմանագրերի համաձայն պայմանագրերով սահմանված պարտավորությունները ստանձնել է Մ. Գասպարյանը: Եվ բարձրացված հարցերին հնարավոր կլինի անդրադառնալ արդեն հանգուցյալ Մ. Գասպարյանի իրավահաջորդության հարցը որոշելուց հետո: Սակայն մինչև օրս այս հարցն իր տրամաբանական լուծումը չի ստացել, որոշ անձինք դիմել են դատարան, սակայն դատական ատյաններն էլ չեն շտապում համապատասխան վճիռներ կայացնել հոգուտ նախկին սեփականատերերի: ՀՀ կառավարության, Երևանի քաղաքապետարանի կողմից մինչև օրս ոչ մի միջոցառում չի ձեռնարկվել իրավական գնահատական տալ ստեղծված իրավիճակի մասին, իսկ կառուցապատող հանգուցյալ Մ. Գասպարյանի իրավահաջորդների կողմից տասնյակից ավելի ընտանիքների բնակարանների ապահովման հարցերը մինչև օրս լուծում չեն ստացել:

Անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ կառավարությունը, մինչև Երևան քաղաքի որևէ տարածք հանրային գերակա շահ ճանաչելը, իսկ Երևանի քաղաքապետը, մինչև դրանք աճուրդի և/կամ մրցույթի ներկայացնելը, մրցույթներին մասնակցող բոլոր ընկերություններից պահանջի նրանց ֆինանսական կարողությունների կամ միջոցների /ակտիվների/ վերաբերյալ տեղեկատվություն, իսկ հետագայում մրցույթում հաղթող ճանաչված ձեռքբերող ընկերությունը իր ձեռքբերված տարածքի բնակչությանը ներկայացնի իր ֆինանսական կարողությունների կամ միջոցների վերաբերյալ հաշվետվություն, ինչը կարող է երաշխիք հանդիսանալ այդ բնակիչների համար և դրանով վստահություն ներշնչել նրանց մոտ: Փորձը ցույց է տալիս, որ օտարման գործընթացի ժամանակ, տարածքի ձեռքբերողները չեն կարողանում բավարարել բնակիչ-սեփականատերերի դրամական փոխհատուցում ստանալու պահանջները, որոնք նրանց կողմից ներկայացվում են Օրենքի շրջանակներում, այլ ոչ թե պահանջում են աստղաբաշխական գումարներ:

09.07.2008թ. Երևանի քաղաքապետարանում տեղի ունեցած հանդիպման ժամանակ ՀՀ նախագահը առաջարկեց հետևյալը. <Մենք մեր աջխատանքներում պետք է ղեկավարվենք երկու կարգախոսով՝ առաջինը՝ Երևանը պետք է հարմար լինի ապրելու

համար, երկրորդը՝ Երևանի խնդիրները պետք է լուծվեն ոչ թե երևանցիների հաշվին, այլ՝ երևանցիների համար»:

Հարկ ենք համարում նշել, որ Երևանի օտարման գոտիներում փաստացի կատարվում է ուղիղ հակառակը: Ասվածը ամուր ձևավորված պրակտիկա է, որի դեմ և օտարման գոտիներում բնակվող սեփականատերերի և այլ գույքային իրավունքներ ունեցող անձանց պաշտպանելու հարցերում պայքարելու համար իրավ անհրաժեշտ է պետության քաղաքական կամքը, ինչը բացակայում է: Մեր ձեռքում գտնվող պայմանագրերից և մի խումբ քաղաքացիների դիմումներից պարզ երևում է, որ ամենը բխում է ձեռքբերողների ու կառուցապատողների շահերից: Սեփականատերերի հետ կնքված պայմանագրերն իրենց դրույթներով հանդերձ չունեն սոցիալական ուղղվածություն, դրանք բխում են միայն ձեռքբերողի և կառուցապատողի շահերից, իսկ իրենց բովանդակությամբ դրանք ավելի շատ պարտավորություններ են սահմանում սեփականատերերի և այլ շահառուների, քան ձեռքբերողների համար: Բացի այդ, դրանք չեն բխում ՀՀ գործող օրենսդրության պահանջներից:

Գործնականում անշարժ գույքի շուկայական գնահատման հարցերում գնահատող կազմակերպությանն ընտրում է ձեռքբերողը, այլ ոչ թե սեփականատերը, բնականաբար գնահատման գործընթացում կամայական մոտեցումներ են թույլ տրվում, իսկ այլ գնահատող կազմակերպություններ հրաժարվում են գնահատել Երևանի օտարման գոտիներում գտնվող շինությունը և հողամասը՝ պատճառաբանելով, որ ներքին հրաման կա և իրենք իրավունք չունեն այդ գոտիներում գնահատման աշխատանքներ կատարել: Չնայած, ՀՀ օրենսդրությունը չի արգելում սեփականատիրոջը դիմել այլ անկախ լիցենզավորված գնահատողի և ստանալ նրա հաշվետվությունը: Նշվածը կրկին ձևավորված պրակտիկա է՝ ղեկավարվում են ներքին հրամանով, որը չի բխում ՀՀ օրենսդրության պահանջներից:

Գործնականում ընդունված է նաև, որ ձեռքբերողները ոչ բոլոր սեփականատերերին են ներկայացնում իրենց անշարժ գույքի շուկայական գնահատման հաշվետվությունները, ինչը պարտավոր են ներկայացնել բոլորին անխտիր: Սեփականատերերն իրենց սեփականության շուկայական արժեքի վերաբերյալ տեղեկանում են նախնական պայմանագիր կնքելիս կամ բանավոր՝ ձեռքբերողի կամ կառուցապատողի կողմից: Դրանով ձեռքբերողները զրկում են քաղաքացիներին, հաշվետվության հետ չհամաձայնվելու դեպքում, սահմանված ժամկետում դատարան դիմելու իրավունքից: Բացի այդ, Երևանի օտարման գոտիներում տարբեր ձեռքբերողներ տարբեր մոտեցումներ են ցուցաբերում և անհավասար, ոչ շահավետ պայմաններ են առաջարկում սեփականատերերին և այլ գույքային իրավունքներ ունեցող քաղաքացիներին, մասնավորապես անշարժ գույքի դիմաց փոխհատուցվում է շուկայականից ցածր գին:

Այս ոլորտում ՀՀ կառավարությունը՝ իր պետական լիազոր մարմինների միջոցով երբևէ չի իրականացրել և չի իրականացնում վերահսկողություն և հանրային մոնիտորինգ, վեր հանելու այն օրենսդրական բացերն ու թերությունները, խախտումները, որոնք թույլ են տրվում օտարվող գոտիների ձեռքբերողների և կառուցապատողների կողմից, օտարման և կառուցապատման ընթացքում:

<Ա. Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն> ՀԿ

19.09.2011թ.